

**ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ
ՄԵՂՔԵՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Կիրակոս վարդապետ Երզնկացին († 1355) ժամանակաշրջանի կրթյալ եւ բանիմաց եկեղեցական գործիչներից է, որ գլխամանկավարժական գործունեությանը զուգահեռ նաեւ թարգմել եւ տարածել է Աստուծոյ խոսքը, հոգեւոր իր փորձառությունը փոխանցել սիրասուն աշակերտներին եւ բանավոր հոտին: Այս առումով իրենց նշանակությամբ եւ արդիակա-
նությամբ առանձնանում են Կիրակոսի խրատական գործերը, որոնք նա գրել է զանազան
առիթուններով: Հոգեւորականներին եւ ժողովրդին ուղղված խրատներով նա, իբրեւ բարոնա-
պետ եւ ճշմարիտ հոգեւոր հայր, հորդորել է նրանց ապրել մաքրակենցաղությամբ, քրիս-
տոնյային վայել վարք ու բարքով՝ միշտ ամուր եւ անխախտ պահելով ուղղափառ հավա-
րքի դավանությունը: Նրա խրատներն ունեն նաեւ կրթադաստիարակչական նշանակություն,
որոնց նպատակն է մարդկանց տարբեր խավերի առավել մոտեցնելու Տիրոջը, նրանց ծանո-
թացնելու Հայոց Եկեղեցու կարգերին, սովորություններին, նրանց միտքն ու հոգին լուսավորե-
լու Աստուծոյ կենդանի խոսքով՝ եւ պահելով մեղքից եւ չարի որոգայթներից:

Մեր ձեռագրական հավաքածուներում Կիրակոսի անունով պահպանվել են մեղքերի
խոստովանության մասին երկու խրատներ, որոնցից առաջինն ունի «Խրատ վասն խոստո-
վանութեան»¹, իսկ մյուսը՝ «Վասն խոստովանութեան մեղաց»² խորագրերը: Նեղինակն
այս խրատներում շեշտում է մեղքերի եւ հավաքքի խոստովանության կարեւորությունը
քրիստոնյայի կյանքում, նկարագրում խոստովանության ձեռն եւ առանձին թվարկում մեղ-
քերի շարքը: Վերագրյալ խրատները ցույց են տալիս, թե ինչպես էր տվյալ ժամանակաշր-
ջանում կատարվում մեղքերի խոստովանության կարգը, որի վերջնական նպատակը Տիրոջ
մարմնի եւ արյան ճաշակումն էր: Կիրակոսի այս երկու գրվածքները նմանաբնույթ մյուս
երկերի հետ հնարավորություն են ընձեռում առավել ամբողջական պատկերացում կազմելու
մեր եկեղեցում գործածված մեղքերի խոստովանության կարգերի մասին: Բնագրագիտա-
կան առումով հետաքրքրական է դրանց բաղադրումն այսօր Հայոց Եկեղեցում գործածվող
մեղքերի ընդհանրական խոստովանության բանաձևի հետ³, որի հեղինակ է համարվում

1 Այս խրատի հնագույն ձեռագիրը Լվովի մատ. Ն^օ 17 թերի ձեռագիրն է (ԺԴ դ.), էջ 247-251. Կեն «Յուցակ
հայերեն ձեռագրաց մատենադարանին համադասարանի ի Լվով», կազմեց Ն. Ներսէս վ. Ալիսենա, Վիեննա, 1961,
էջ 21: Մաշտոցյան Մատենադարանում պահվում են խրատը պարունակող երկու ձեռագիր՝ ՄՄ ձեռ. Ն^օ 933 (ԺԵ
դ.), թ. 132բ-139բ, Ն^օ 2335 (1476 թ.), թ. 302բ-308ա. Կեն «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան
Մատենադարանի», հ. Գ. Երեւան, 2007, էջ 1281, հ. Ա. Երեւան, 1965, էջ 779, ինչպես նաեւ՝ Վիեն. Մխիթ. Մատ.
ձեռ. Ն^օ 88 (1638-57 թթ.), էջ 137ա-137բ, Ն^օ 838 (1649 թ.), էջ 196բ-208ա. Կեն «Յուցակ հայերեն ձեռագրաց
Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա», հ. Բ, կազմեց Ն. Համազասպ Ռսկեան, Վիեննա, 1963, էջ 416,
Երուսաղեմի մատ. ձեռ. Ն^օ 1495, էջ 64-90, Ն^օ 2344 (1675 թ.), էջ 271-290. Կեն «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց
Յակոբեանց», հ. Ե, կազմեց Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 230, հ. Է, Երուսաղեմ, 1974, էջ 473: Ի
դեպ՝ խոստովանության մասին խրատներից մեկը պահպանվել է նաեւ թուրքերենով: Հավանաբար այն ծառայել է
թրքախոս հայության հոգեւոր կարիքների համար. Կեն. մատ. ձեռ. Ն^օ 143 (ԺԵ-ԺԶ դդ.), էջ 201բ-217բ, ձեռ.
Ն^օ 525 (1618 թ.), էջ 167բ-169ա. «Յուցակ... Մատենադարանին ի Վիեննա», հ. Բ, էջ 443, 996-997:

2 «Վասն խոստովանութեան մեղաց» խրատը մեզ է հասել ձեռագիր մեկ ընդօրինակությամբ. Կեն ՄՄ ձեռ.
Ն^օ 8509 (ԺԷ դ.), թ. 139բ-145ա:

3 «Մեղայի» բացատրությունը Կեն Մկրտիչ վրդ. Արծրունեան, Բացատրություն հրաժարման եւ զոջման

եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409)⁴: Նրան է վերագրվում նաև հայոց «Ժամագրքի» սկզբում՝ Գիշերային ժամերգությունից առաջ, դրված «Խոստովանիմք և հաւարամք» սկսվածքով հավատարմության հռչակումը⁵, «Մեղայ Ամենասուրբ Երրորդությանն» աղոթքը և հոգեւորականի կողմից ասվող «Արձակման» կարգը⁶: Կիրակոսի հեղինակած այս խրատներին և այսօր գործածվող մեղքերի խոստովանության բանաձևի համեմատությունը փաստում է, որ Տաթևացուց առաջ՝ վանական միջավայրերում, արդեն իսկ կիրառվել են խոստովանության նմանարիպ կարգեր⁷: Պարզապես Գրիգոր Տաթևացին համակարգել և վերջնականապես խմբագրել է մեղքերի խոստովանության նախորդ բոլոր բանաձևերումնրը⁸: Վարանաբար Տաթևացին իր վերջնական խմբագրման համար աչքի առաջ է ունեցել նաև Կիրակոս րաբունապետի այս երկու երկերը, քանի որ նա քաջապրեղյակ է Կիրակոս Երզնկացու մարենագրական ժառանգությանը⁹:

բանից սրբոց հարց..., Յերուսաղեմ, 1854, էջ 1-122, Ս. Ս. Մայիլևան, Ոսկեփորիկ, մասն Բ., Երևան, 1993, էջ 92-132, «Մեղայ Ապոմոն», աշխարասիրությամբ Մեղա Մարմուրյանի, Ս. Էջմիածին, 2001, էջ 7-92:

4 Տե՛ս **Նորայր արք. Պողոսյան**, Ծխագիրություն, Նիւ Եորք, 1990, էջ 5-6:

5 Հայոց Եկեղեցում գործածվող Հավատամքերի մասին տե՛ս **Ն. Յովսէփ վ. Գաթրոնյան**, Հանգանակ հաւարոյ, որով վարի Հայաստանայց Եկեղեցի, Վիեննա, 1891, էջ 1-49, **Զարեհ արք. Ազնաւորեան**, Մեկնութիւն Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ Հաւարամքին, խմբագիր՝ Վաղինակ վրդ. Մելոյեան, Հալեպ, 2008, էջ 19-441:

6 Տե՛ս «Ժամագիրք Հայաստանայց Եկեղեցոյ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 2-10: Արշակ Տեր-Միքելյանի Արձակման կարգի ժամանակ ասվող Ողորմեսցին վերագրում է Ս. Գրիգոր Լուսավորչին. տե՛ս **Արշակ Տեր-Միքելյան**, Հայաստանայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 435:

7 Խոստովանության կարգի մասին մեզ հասած կանոնական միակ վկայությունը պահպանվել է Կոստանդնուպոլսի Բարձրբերդի Կաթողիկոսի (1221-1267) 1251 թ. Արևելյան Հայաստանի հայերին ուղղված խրատական թղթում, որը հրատարակել է բազմավաստակ հայագետ Լեոն Խաչիկյանը: Թղթի Ե. կանոնում մասնավորապես ասվում է. «Յամենայն կիրակելի առնու քահանայն գլխավորությունն ի ժողովրդենն ի Դ (4) ամեն ի վեր՝ յառնէ և ի կնոջ: Եւ թէ շար է ժողովուրդն ի ԻԱ (21) արն անպարճառ ճանաչէ զիւր ժողովուրդն երեցն, թէ որպէս է կացեալ. և ի մրի պահեն զյանցանքն՝ մինչ որ ասն իրիցուն: Եւ թէ մեծ ինչ մեղք է՝ յարն յորում դիպեցաւ խոստովանի, և մի՛ հանգիստ անձինն մինչ որ խոստովանի, և խոստովանի ի վաղին մի՛ ելցէ քրիստովնէին: Եւ խոստովանութեան խրատ վաղեցական գեղուցանեմք: Գ (3) ծուր դնէ ընդ արեւելս և ասէ՝ Հաւարամ ի քեզ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, Երրորդութիւն և մի Ապուածութիւն, անոխակալ և անյիշաչար, որ քննես զսիրտս մեր և քննես զամենայն գործս մեր, հաւարամ ի քեզ՝ Քրիստոս Ապուած, որ եկիր և զալոց ևս դարել զաշխարհս ըստ յորաքանցիւր գործոց: Եւ ի ծունկս իջանէ առաջի քահանային մարդն գլխիբաց և կինն ծածկով և ասէ՝ Մեղայ Ապուածոյ, մեղայ սուրբ պապութիւնի նորա, մեղայ առաջի Ապուածոյ և հրեշտակին, որ պահէ զիս, մեղայ իմոյ անձինս և ամենայն մերձաւորաց իմոց, մեղայ խորհրդով, բանիւ և գործով, աչաւք, ականջաւք, լեզուաւք, ձեռնաւք, ոտնաւք և ամենայն անդամաւքս, առաւել կամաւք և զիւրութեամբ, քան թէ ակամայ և անզիւրութեամբ, մեղայ և քեզ, րէր երեց և իմ հոգեւոր հայր, մեղայ քո սուրբ խրատուն և արիւնացն, զոր պապութիւնցեր ինձ: Եւ ապա սկսանի որպէս և լեալ է և զարինակ մեղացն, պարսաւելով զինքն և արքատուաւք, և այնպէս ջանայ, որ աւելի ասէ քան զայն, որ լեալ են իրքն»։ **Լեոն Խաչիկեան**, Աշխարհութիւններ, Կ. Ա, Երևան, 1995, էջ 171:

8 Հայ մարենագրության մեջ Ս. Աթանաս Ալեքսանդրացու (295-373) և Ս. Եփրեմ Ասորիի († 373) անուններով պահպանվել է մի գրվածք, որն այսօր մեր եկեղեցում գործածվող ընդհանրական խոստովանության կարգի աղբյուրներից է. տե՛ս «Գիրք աղօթից ասացեալ Սրբոյն Եփրեմի Խորին Ասորոյ», Յերուսաղեմ, 1933, էջ 11-28. երկի մասին տե՛ս **Edward G. Mathews**, Syriac into Armenian: The translations and their translations, "Journal of the Canadian Society for Syriac Studies" 10, 2010, p. 29: «Մեղայի» նմանարիպ մի կարգ էլ վերագրվում է Ս. Եսազր Պոնուրացուն (Դ. դ.). տե՛ս «Սրբոյ հօրն Եսազրի Պոնուրացոյ վարք և մարենագրութիւն ի Յունէ ի Հայ բարբառ ի հինգերորդ դարոյ», աշխարասիրութեամբ և ծանօթութեամբ ի լոյս ընծայեաց Ն. Բարսեղ Վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ 377-383: «Հարանց վարք»-ում նմանարիպ մի խոստովանություն է վերագրվում Ս. Գրիգոր Նարեկացուն (Ժ-ԺԱ. դդ.). տե՛ս «Գիրք որ կոչի Հարանց Վարք», Կ. Պոլիս, 1720, էջ 557-558:

9 Օրինակ՝ Գրիգոր Տաթևացին բառացի ամբողջական հաղված է քաղել Կիրակոս Երզնկացու մեկ ճառից՝ առանց նրան հանվան հիշելու. տե՛ս **Տիգրան սարկավազ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Նախերգան Տառնընդառաջին» ճառը, «Էջմիածին», 2011, Գ, էջ 91:

Կիրակոս րաբունապետի «Խրատ վասն խոստովանութեան» երկը բաղկացած է մի քանի մասերից՝ խոստովանության ձևից, աղոթքից, հավաքքի դավանությունից և մեղաների թվարկումից: Կարևորելով խոստովանության անհրաժեշտությունը մարդու կյանքում՝ Կիրակոս Երզնկացին նշում է, որ քրիստոնյան ամեն մի «կիրակմարի» պետք է խոստովանի իր մեղքերը, որպեսզի պարտասպ լինի Ս. Պարարագի ժամանակ հաղորդություն սրանալու: Խոստովանողը պետք է երեք էական բաների մասին խորհի, և այդ գիտակցությամբ ու համոզումով միայն խոստովանի իր մեղքերը: Քրիստոնյան նախ՝ պետք է իր մեղքերը խոստովանի քահանայական աստիճան ունեցող հոգևորականին՝ իբրև Աստծո առաջ, որովհետև Տիրոջից է նրան փրկած մեղքերը կապելու և արձակելու իշխանությունը: Երկրորդ՝ անառակ որդու և փաճարում աղոթող մաքսավորի նման խոնարհությամբ պիտի կանգնի քահանայի առաջ, «զի գործք մեղացն հպարտութիւն է, իսկ գործք զոջմանն և խոստովանութեանն խոնարհութիւն է»: Երրորդ՝ պետք է խոստովանի այն մեղքերը, որոնք գործել է նախորդ խոստովանությունից հետո: Այսպիսով Կիրակոս Երզնկացին կարևոր է համարում, որ խոստովանողը մտաբերի մեղանշելու մանրամասները՝ բացահայտելու համար փոխադրված հոգևոր զգոնությունը և խոստովանությանն իրապես պարտասպ լինելը: Ահա միայն այս ամենը գիտակցելուց հետո քրիստոնյան կարող է խոստովանության գնալ:

Այնուհետև Կիրակոսը նկարագրում է խոստովանության բուն գործընթացը: Երբ մարդ գնում է իր խոստովանահոր մոտ, երեք անգամ ծնրադրում է Ս. Երրորդության անունով և մի աղոթք ասում, որում Տիրոջից խնդրում է ուժ՝ «առանց ամառոյ» խոստովանելու իր մեղքերը: Նա խնդրում է Աստծուց, որ հեռացնի իրենից սարսանային, որպեսզի չմոռանա մեղքերը, և ճշմարտությամբ խոստովանի դրանք: Խոստովանողը հայցում է Ս. Աստվածածնի, Ս. Նովհաննես Մկրտչի և մյուս սուրբերի բարեխոսությունը, Տխուսից խնդրում ազատել իրեն չարի մտածումից, որպեսզի հույսով և հավատով Տիրոջը խոստովանի իր մեղքերը և Նրանից մեղքերի թողության արժանանա: Ապա խոստովանողը ծնկաչոք, բաց գլխով, արցունքով, դեմքը դեպի արևելք՝ քահանայի առաջ խոստովանում է իր մեղքերը և արդասանում հավաքքի դավանությունը¹⁰: Կիրակոս Երզնկացին շեշտում է, որ վերջինս մեր հավաքքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի դավանանքն է՝ «ըստ ողորպիսո հաւարոյ և առաքելական կանոնաց»¹¹: Այս կարճ խոստովանության մեջ ամփոփված են հավաքքի կարևոր

10 Ըստ ՆԲՏԼ-ի՝ «դավանել» նշանակում է ընդունել, խոստովանել, վկայել որպես ճշմարտություն և հաստատել այն ամենը, ինչին հավատում են. փոխ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», երկասիրություն երից վարդապետաց յաշակերպութենէ մեծին Մխիթարայ Աբրահոմ Ն. Գաբրիելի Անարիքեան, Ն. Խաչատրյայ Միսմէկեան, Ն. Մկրտչի Ազեղեան, և. Ա. Վենետիկ, 1836, էջ 606: Այն նաև նշանակում է խոստովանել և վկայել բերանով, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Քանի որ արդարանալու համար սրբով եք հաւարում և փրկության համար խոստովանում բերանով, քանզի Գիրքն ասում է. «Ամեն ոք, որ հավարա Նրան, ցի ամաչելու» (Նոմ. Ժ. 10-11): Ուստի եկեղեցում ամեն օր բարձրաձայն ընթերցվում է Նավարո հանգանակը: Ինչպես Ընդհանրական, այնպես էլ մեր առաքելախմբն Եկեղեցու հայրերն ու վարդապետներն իրենց գրվածքներում շեշտել են ողորպիսո դավանանքի խմացության և այն անաղարք պահելու անհրաժեշտությունը: Նրանք շեշտել են, որ հավաքքի առաջին աստիճանը կամ փեսակը դավանական հավաքքն է կամ հավաքքի դավանությունը: Այս մասին Ս. Աթանաս Ալեքսանդրացին ասում է. «Զի առաջին փեսակ ճանաչելոյ զԱստուած, ուղիղ հաւարոյն խոստովանութիւնն է». փոխ «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ Նայրապետի ճառք, թուղթք և ընդդիմաստիցութիւնք», Վենետիկ, 1899, էջ 239:

11 Կիրակոս Երզնկացին իր մյուս երկերում նույնպես շեշտում է ողորպիսո դավանանքի կարևորությունը: Նովհաննեսի Ա. 1 համարի մեկնողական ճառում, որպես իր հավաքքի դավանության խոստովանություն, մեջբերում է Ս. Գրիգոր Նարեկացուն վերագրվող «Բան խրատու վասն ողիղ հաւարոյ և մաքուր վարուց առաքինութեան» երկից մի հատված. փոխ ՄՄ ձեռ. ՏՊ 1098, 1320 թ., թ. 114բ-118ա:

սկզբունքները: Տեղաբերական է, որ բայերն այսպեղ եզակի թվով են՝ «խոսարարանիմ եւ հաւարամ», որպեղ շեշտում է հենց անհարի խոսարարանության կարեւորությունը նրա փրկության համար:

Նավարում ենք Ս. Երրորդությանը՝ Նորը, Որդուն եւ Ս. Նոգուն: Անդրադառնալով Ս. Երրորդության առանձնավորական հարկություններին եւ արահայտելով Նայոց Եկեղեցու դիրքորոշումը՝ Կիրակոսը նշում է, որ Որդի Ասարված ծնունդ է Նորից, իսկ Ս. Նոգին՝ բխում: Որդի Ասարծո համար «ծնունդ», եւ Ս. Նոգու դեպքում «բխում» կամ «ելում» ասարվածաբանական եզրերը համակողմանիորեն եւ մանրագին բացարկել եւ Նայոց Եկեղեցու վարդապետներին եւ հայրերին կողմից, որոնցից է նաեւ Կիրակոս րաբունապետը: Բայց իր մյուս՝ «Վասն խոսարարանութեան մեղաց» խրարի կարծ խոսարարանության մեջ այս հարցում ուղղափառությունից շեղում է նկարվում: Խոսարարանելով եւ հավարարով առաջին երեք Տիեզերաժողովներում բանաձեւված Նանգանակին՝ Կիրակոսը մեջբերում է Ս. Աթանասին վերագրվող հեղեյալ միտքը. «Որդին Միածին ի Նորէ բխումն»: Անշուշտ, Աթանասը, լինելով ժամանակի ուղղափառ դավանության ջարագովներից, չէր կարող նման բան ասել: Սա հավանաբար կաթոլիկ միջավայրում կենցաղավարած կեղծ-աթանասյան ինչ-որ մի երկից է, եւ Կիրակոսի խրար է ներմուծվել, ամենայն հավանականությամբ, գրչի կամ կաթոլիկ միջավայրում ձեռագրի սրեղծման պարճառով: Քանզի առաջին բնագրում Կիրակոսը շար հարակ արահայտում է իր դիրքորոշումն այս հարցում՝ գրելով. «...ծնունդ եւ Որդին Միածին ի Նարէ՛ Ասարում ճշմարիտ, բոխումն Ամենասուրբ Նոգին ի Նարէ՛ Ասարում ճշմարիտ»:

Ապա Կիրակոսն անդրադառնում է Ս. Երրորդության երկրորդ անձին՝ Որդի Ասարծուն, եւ շարադրում մեր հավարքի համար կարեւոր մի շարք ճշմարտություններ, որոնց իմացությունը հույժ անհրաժեշտ է ամեն մի խոսարարանողի համար:

Նավարքի կարծ խոսարարանությունից հեկո սկսվում է զանազան մեղքերի թվարկումը, որոնք քրիստոնյան խոսարարանում է քահանայի առաջ: Կիրակոսը խոսարարանության երկարելն օգուտ եւ շահ է համարում խոսարարանվողի համար, իսկ քահանային հորդորում համբերությամբ լսելու քվյալ մարդու խոսարարանությունը, որպեսզի ինքն էլ Քրիստոսից վարձք սրանա: Վերջում խրար է քալիս նաեւ քահանային. «Պարտ է քահանային հարցանել եւ քննել սրուգութեամբ, զի սարանայ ի ժամ խոսարարանութեան բագում ամաւթ եւ մոռացումն արկանէ ի վերայ մեղուցելոյն, եւ յորժամ զամէն բան ճշմարտութեամբ իմանաս եւ սրուգութեամբ, ապա շնորհեա նմա զթողութիւն եւ զարձակումն ի մեղաց իրոց ողորմութեամբն Քրիստոսի»:

Կիրակոսի այս խրարներին աղբյուրներից է Ասարվածաշունչ մարյանը, որից ներշնչվելով՝ հեղինակը շարադրել է իր երկերը: Նա օգրվել է նաեւ նմանաբնույթ մյուս գրվածքներից, մասնավորապէս Ս. Աթանաս Ալեքսանդրացու եւ Ս. Եփրեմ Ասորիի անուններով պահպանված մի խոսարարանությունից, որը, ինչպէս արդեն նշել ենք, մեր եկեղեցում այսօր գործածվող ընդհանրական խոսարարանության բանաձեւի աղբյուրներից է:

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ	ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՅԻ
Ո՛հ, որ յերևելիս աստուածաշունչ էր և աղօթող և պահեցող, և ի ծածուկ թերահաւար և ծոյլ և յամենայն բարեաց ունայն: Յերևելիս՝ կուսան և ի ծածուկ՝ վավաշութ, յերևելիս՝ ժիր, և ի ծածուկ՝ թոյլ, յերևելիս՝ պարկեշտ, և ի ծածուկ՝ ագահ, յերևելիս՝ ողորմած, և ի ծածուկ՝ անողորմ, յերևելիս՝ աղքատասէր, և ի ծածուկ՝ աղքատաբեկ, յերևելիս՝ առաքինի, և ի ծածուկ՝ պղծ, յերևելիս՝ գովելի, և ի ծածուկ՝ պարսաւելի: Էջ 17-18	Ո՛հ, որ յերևելիս աստուածաշունչ էր և պահեցող և աղաթող, և ի ծածուկ թերահաւար և ծոյլ և յամենայն բարեաց ունայն: Յերևելիս՝ կուսան և ի ծածուկ՝ պոռնիկ, յերևելիս՝ սուրբ, և ի ծածուկ՝ պեղծ, յերևելիս՝ ժիր, և ի ծածուկ՝ ծոյլ, յերևելիս՝ պարկեշտ, և ի ծածուկ՝ ագահ, յերևելիս՝ ողորմած, և ի ծածուկ՝ գրկող, յերևելիս՝ աղքատասէր, և ի ծածուկ՝ աղքատաբեկ, յերևելիս՝ առաքինի, և ի ծածուկ՝ մոլի, յերևելիս՝ գովելի, և ի ծածուկ՝ պարսաւելի:

Կիրակոս Երզնկացու «Խրատ վասն խոստովանության» երկի բնագիրը կազմել ենք չորս ձեռագրերի հիման վրա: Մեր կարծիքով Ա. և Բ. ձեռագրերն արքայապետ են գրվածքի նախնական փաթեթակը, Գ. ձեռագիրը կիսապատկերով է, իսկ 1649 թ. Բաբերդում ընդօրինակված Դ. ձեռագրում արդեն նկատվելի են ժամանակի ազդեցությամբ արված որոշ հավելումներ, որոնք չեն եղել Կիրակոսի բուն գործում: Ուստի այդ ամենն արքայապետ ենք փաթեթակների մեջ: Այս բնագրի պատրաստության ժամանակ վերականգնել ենք բառավորի չգրված յ-երը, -ի ավարտով բառերի սեռական-սեռականի և-երը, զանց ենք առել յ-ի և գաղտնավանկ ը-ի անփոփոխ գործածությունները: Գրչագրում առկա ա-ի և օ-ի գուգահեռ գործածություններից նախընտրությունը տրվել ենք առ փաթեթակին: Անհրաժեշտության դեպքում մեր կարգած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []: Տեքստական անոտները և նրանց փոխարինող դերանունները ներկայացրել ենք մեծատառով՝ առավել հստակ և ճշգրիտ դարձնելու համար նախադասությունների իմաստը:

«Վասն խոստովանության մեղաց» երկի բնագիրը ներկայացնում ենք նույնությամբ, զանց ենք առել միայն գաղտնավանկ ը-ի այն գործածությունները, որոնք կապ չունեն հանգավորման հետ: Բնագրի պատրաստության ժամանակ օգտագործել ենք հետևյալ նշանները՝] (փոխ.), > (=չիք), ~ (=չք), + (=ավելացված է)¹²: Բնագրերը հրատարակվում են առաջին անգամ: Ստորև տրվում են ձեռագրերի նկարագրությունները:

Ա-ՄՄ ձեռ. № 2335 (Ժողովածու), թ. 302բ-308ա, 1476, վայր՝ Երուսաղեմ, գրիչ՝ Կարապետ քիյ., 311 թերթ, թուղթ 17,2x12,5, գրութին՝ միասին, երկսիւն, գիր՝ նոսրագիր, 25-35 փող:

Բ-ՄՄ ձեռ. № 933 (Ճառքնարիք), թ. 132բ-139բ, ԺԵ դ., գրիչ՝ Մկրտիչ, Բաբսեղ սրկ.,

¹² Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մարենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանին և Վիեննայի Միլիթարյան միաբանության անդամ Վահան վրդ. Նովակիյանին՝ Մարենադարանում և Վիեննայում պահվող խրատների թվային փաթեթակների ձեռք բերման համար:

Կարապետ, սրացող՝ Ծերուն քիյ., 435 թերթ, թուղթ 28x18, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ բոլորգիր, 28-31 Կող: Խոնավոյթան պարճառով բնագրի որոշ հարվածներ գունաթափված են և չեն երևում, ուստի համեմարել ենք ընթերցանելի բոլոր հարվածները: Ի Կարբերոյթուն Ա. ձեռագրի՝ որոշ հարվածներ բացակայում են:

Գ-Վիեն. մար. ձեռ. Ն^թ 88 (Նաւաթածոյ), էջ 137ա-137բ, 1638-57 թթ., վայր՝ Տրապիզոն, գրիչ՝ Ամիրասի Երզնկացի, 305 թերթ, թուղթ 20x13,5, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ խառը, Կող՝ 24-28: Ձեռագրում բնագիրը կիսապ է, ավարտվում է «իբրև Աստուծոյ և ևս թողութիւն արասցէ» Կողով:

Դ- Վիեն. մար. ձեռ. Ն^թ 838 (Մաղմոսարան, Ժամագիրք, ՊարարագամաԿոյց), թ. 196բ-212բ, 1649 թ., գրիչ՝ Մելքսէթ երէց, վայր՝ Բաբերդ, սրացող՝ Մինաս Կարունապետ, 266 թերթ, թուղթ 19,5x13,5, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ բոլորգիր:

ՄՄ ձեռ. Ն^թ 8509 (Ժողովածու), թ. 139բ-145ա, ԺԷ դ. (1636-ից առաջ), 1636, 1688 թթ., գրիչ՝ Սիմէոն (Ա), Դաւիթ (Գ), 217 թերթ, թուղթ 14,1-14,3x10,5-11, գրութիւն՝ միասիւն, գիր՝ նոսրգիր, 14-18 Կող:

ԶԱԲԱՐԻԱ ԱԲԵՂԱ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ԽՐԱՏ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱ- ՆՈՒԹԵԱՆ, ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵԶՆԿԱՑԻՈՅ¹

Պարտ է քրիստոնեին², որ յա-
մէն³ կիրակմտի⁴ խոստովանի⁵: Եւ
յորժամ երթայ ի խոստովանու-
թիւն⁶, երիս⁷ ինչ ածէ զմտաւ⁸:

Նախ զայս՝ եթէ⁹ զխոստովա-
նութիւնս¹⁰, զոր կու ասեմ քա-
հանային, առաջի Աստուծոյ է,
եւ զոր սա կապէ աստ, կապեալ
է յերկինս առաջի Աստուծոյ, եւ
զոր սա արձակէ աստ, արձակեալ
է յերկինս¹¹ առաջի Աստուծոյ¹²,
որպէս Քրիստոս հրամայեաց,
թէ՝ «Զոր կապէք¹³ յերկրի, եղիցի¹⁴
կապեալ յերկինս¹⁵, եւ զոր¹⁶ արձա-
կիցէք¹⁷ յերկրի, եղիցի արձակեալ
յերկինս (Մատթ. ԺԸ. 18):

1 Գ + վասն քրիստոնէի, Դ վարդապետն Եզնկացի]
վարդապետին Եզնկացոյ
2 Գ քրիստոնէից
3 Գ յամենայն, Դ ամէն
4 Դ կիրակի
5 Գ ի խոստովանել
6 Դ ~ ի խոստովանութիւն երթայ
7 Գ քիս
8 ԳԴ ~ զմտաւ ածէ
9 Գ թէ
10 Գ խոստովանութիւն
11 Գ > քահանային ... արձակեալ է յերկինս
12 Դ > եւ զոր սա արձակէ... յերկինս առաջի Աստուծոյ
13 Դ ինչ կապիցէք] կապէք
14 Բ+ եղիցի
15 Գ > յերկինս, Դ յերկրինս
16 Դ + ինչ
17 Բ արձակեցէք

Եւ¹⁸ երկրորդ՝ զի յոյժ խոնար-
հութեամբ պիտոյ¹⁹ է²⁰ անկանել²¹
առաջի քահանային ի վերայ երե-
սաց²², զի գործք²³ մեղացն²⁴ հպար-
տութիւն է, իսկ գործք²⁵ զղջմանն²⁶
եւ խոստովանութեանն²⁷ խոնար-
հութիւն է, որպէս արար անառակ
որդին²⁸ եւ մաքսաւորն ի տաճա-
րին (տե՛ս Ղուկ. ԺԵ. 11-32, ԺԸ.
9-14):

Եւ²⁹ երրորդ՝ զի³⁰ զմտաւ ած-
ցէ³¹ յայնմ աւրէ³², որ³³ յառաջն³⁴
խոստովանել³⁵ է, մինչեւ ցայն
աւրն³⁶, որ³⁷ կու խոստովանի³⁸: Եւ
գիտասցէ զմիջոցն³⁹ թէ տարի է⁴⁰,
թէ⁴¹ կէս, թէ ամիս է, եթէ⁴² կէս,
եւ թէ⁴³ ո՞րքան է⁴⁴ զամենայն⁴⁵ մի

18 ԳԴ > եւ
19 Գ պարտ
20 Դ > պիտոյ է
21 Դ անկանիլ
22 Գ երեսացն
23 ԳԴ գործիք
24 ԲԴ մեղաց
25 Գ բայց] իսկ գործք, Դ գործիք
26 Դ զղջման
27 ԲԴ խոստովանութեան
28 Դ ~ անառակ որդին արար
29 Դ > եւ
30 Դ > զի
31 Դ ածէ
32 Գ յաւրէ
33 Դ գոր
34 Գ յառաջ
35 ԳԴ խոստովանեալ
36 Գ ար
37 Գ > որ
38 Ա խոստովանի
39 Դ զմէջն
40 Գ + եւ
41 Դ եւ
42 ԳԴ եւ թէ] եթէ
43 Բ > թէ
44 Գ որչափ իցէ, Դ քան օր է] որքան է
45 Գ եւ զամենայն

ըստ միողէ սկսանի յայն աւուրն⁴⁶ ի⁴⁷ հետէ⁴⁸ եւ ասէ⁴⁹, թէ գիշեր⁵⁰ է պատահել մեղքն, թէ ցերեկ⁵¹: Ասէ⁵² եւ զաւրն՝ թէ կիրակի էր⁵³, թէ տաւն⁵⁴ էր, թէ պահք էր⁵⁵, թէ լուր աւր⁵⁶ էր: Ասէ եւ զտեղիք⁵⁷ մեղացն՝ սուրբ էր, թէ անսուրբ⁵⁸: Ասէ եւ զձեւ մեղացն՝ թէ յիւրմէ⁵⁹ սկիզբն⁶⁰ էառ⁶¹, թէ յայլմէ⁶²: Եւ յորժամ երթայ առ խոստովանահայրն, յառաջն⁶³ Գ.⁶⁴ ծուներ⁶⁵ դնէ⁶⁶ յանուն Սուրբ⁶⁷ Երրորդու-թեանն⁶⁸ եւ ասէ զաղաւթս զայս⁶⁹:

Գոհանամ⁷⁰ զՔէն, Տէր Աստուած իմ⁷¹, որ արժանի արարեր զիս⁷²՝ զալ ի խոստովանութիւն:

Եւ արդ⁷³, տո՛ւր ինձ Տէր՝ ըստ հաճոյից⁷⁴ Քոց⁷⁵ խոստովանել⁷⁶ զմեղս իմ առանց ամաւթոյ, եւ հալածեա՛ յինէն զսատանայ, զի մի՛ մոռացումն⁷⁷ արասցէ մեղաց իմոց, եւ զբաղումն եւ⁷⁸ զչար ամաւթ արկցէ⁷⁹ ի վերայ իմ, եւ ոչ տայ⁸⁰ ինձ ճշմարտութեամբ խոստովանել զմեղս իմ: Այլ⁸¹ բարեխոսու/303ա/թեամբ⁸² Սուրբ⁸³ Աստուածածնին՝ անարատ⁸⁴ Ծնաւղին⁸⁵ Քո, եւ աղաչանաւք Սրբոյն Յովհաննու⁸⁶ Կարապետին⁸⁷ եւ ամենայն սրբոց քոց⁸⁸, հերքեա՛ յինէն, Տէր իմ⁸⁹ Յիսուս Քրիստոս⁹⁰, զչարին խորհրդակցութիւնն⁹¹: Զի յուսով եւ հաւատով⁹² բացից զբերան իմ, եւ ասացից զմեղս իմ առաջի Քո⁹³ մեծաւ հաւատով եւ երկրւղիւ⁹⁴, եւ ընկալայց ի Քէն,

46 Գ. յարէն

47 Բ + ի

48 Գ. հետ, Դ > յայն ատուն ի հետ:

49 Դ + այնուհետեւ

50 Գ.Դ. գիշերն

51 Գ.Դ. ցերեկն

52 Գ. եւ ասէ

53 Բ > թէ

54 Գ + ի սրբոց ար

55 Գ + եւ, Դ ~ թէ պահք էր, թէ փօն էր

56 Դ > ար

57 Գ. զտեղիքն] եւ զտեղիք

58 Գ. ի սուրբ փեղիք էր եւ թէ անսուրբ, Դ. ի սուրբ փեղիք էր, թէ անսուրբ] սուրբ էր, թէ անսուրբ

59 Գ. իւրմէ է] յիւրմէ, Դ. իւրմէ

60 Բ. սկիզբն, Դ. սկզբն

61 Գ. > էառ, Դ. է

62 Գ. + է, Դ. այլմէ

63 Դ > յառաջն

64 Գ. + անգամ

65 Դ. ծունդը

66 Դ. կրկնէ

67 Գ. ամէնատրբ

68 Դ. Երրորդութեան

69 Դ. > զայս

70 Գ. գոհանամք

71 Գ. մեր

72 Գ. + զանարժանս ծառայս քո

73 Գ. այժմ աղաչեմ զքեզ] արդ

74 Դ. + կամաց

75 Դ. > քոց

76 Ա. խոստովանել

77 Գ. այնու անցումն] մոռացումն

78 Գ.Դ. բազում] զբաղումն եւ

79 Գ. > արկցէ

80 Գ.Դ. չտայ] ոչ տայ

81 Դ. այլեւ

82 Գ. բարեխոսութեամբ, Դ. բարեխոսութեամբ

83 Դ. սրբուհոյ

84 Գ. եւ անարատ

85 Գ. Դ. ծնողի

86 Դ. Յովաննու

87 Դ. + սրբոյն Սպեւիաննոսի Նախավկային

88 Դ. + այլեւ

89 Գ. + Աստուած իմ

90 Դ. > Տէր իմ, Յիսուս Քրիստոս

91 Գ. խորհրդակցութիւն

92 Գ. > եւ հաւատով

93 Գ. > իմ առաջի քո

94 Դ. > եւ երկիւղիւ

Տէ՛ր իմ⁹⁵, զթողութիւն մեղաց⁹⁶, վասն զի Աստուած ողորմած ես եւ մարդասէր⁹⁷, երկայնամիտ⁹⁸ եւ բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան եւ թողուս զմեղս ամենեցուն, որ կարգան առ Քեզ⁹⁹: Եւ արդ, թո՛ղ ինձ, Տէ՛ր¹⁰⁰, զմեղս իմ, եւ Քեզ փառք ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն¹⁰¹ յաւիտեանս. ամէն¹⁰²:

Եւ ապա ի ծունկս¹⁰³ անկեալ՝ բացաւ գլխով¹⁰⁴ եւ արտասուեալք առաջի քահանային ի վերայ երեսաց իւրոց՝ զդէմս¹⁰⁵ յարեւելս ունելով եւ¹⁰⁶ խոստովանի քահանային՝ իբրեւ Աստուծոյ¹⁰⁷, եւ նա թողու¹⁰⁸ իշխանութեամբ կարգին որպէս¹⁰⁹ զԱստուած, եւ ասացէ զգաւանութիւն Սուրբ Լուսաւորչին՝ ըստ ուղղափառ¹¹⁰ հաւատոյ

եւ առաքելական կանոնաց¹¹¹, որ է այսպէս:

Խոստովանիմ եւ հաւատամ¹¹² զԱմենասուրբ¹¹³ Երրորդութիւնն¹¹⁴ անմահ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի:

Խոստովանիմ եւ հաւատամ Սուրբ¹¹⁵ զԵրրորդութիւնն¹¹⁶՝ երիս եւ մի աստուածութիւն¹¹⁷, մի թաղաւորութիւն¹¹⁸, մի տէրութիւն, մի իշխանութիւն¹¹⁹, մի պատիւ, մի զաւրութիւն եւ¹²⁰ մի փառաւորութիւն: Ոչ նուազ Որդի ի Հաւր է եւ ոչ ի¹²¹ յՈրդւոյ՝ Հոգի. անեղ եւ¹²² անապական առանց որպիսութեան, առանց որքանութեան, ծնաւ չափ՝ Միածին Որդւոյ Աստուած ճշմարիտ, ծնունդ եւ Որդին¹²³ Միածին ի Հաւրէ՝ Աստուած ճշմարիտ, բղխումն¹²⁴ Ամենասուրբ Հոգին¹²⁵ ի Հաւրէ՝ Աստուած ճշմարիտ՝ միաւորեալ բաժանմամբ եւ որոշեալ միաւորութեամբ նոյն ինքն Երրորդութիւն Սուրբ, որ է

95 ԲԳ > իմ, Դ > Տէր իմ

96 ԳԴ + իմոց

97 Դ ~ ողորմած եւ մարդասէր ես

98 Դ > երկայնամիտ

99 Դ > եւ թողուս... առ Քեզ

100 Գ > Տէր, Դ ~ Տէր թող ինձ

101 ԳԴ՝ Հոգւոյն

102 Գ + յաւիտեանից ամմէն] ամէն, Դ + հրաժարիմք ի սարանայէ եւ ամենայն խաբեութենէ նորա, եւ ի պաշտմանէ նորա, եւ ի գնացից նորա, եւ ի հրէշտակաց նորա, եւ ի կամարարաց նորա, եւ ի չար գորութենէ նորա, եւ ամենայն խիղճ խորհրդոց նորա՝ հրաժարելով հրաժարիմք

103 Գ ծունկ

104 Գ գլովս

105 Գ ընդէմ

106 Գ > եւ, Դ բանայ զգլովսն] բացաւ գլխով... ունելով եւ

107 Դ > Աստուծոյ

108 Գ + թողութիւն արացէ] թողու: Բնագիրն այսպէղ ավարտվում է:

109 Դ իբրեւ

110 Բ ուղայիսառ

111 Դ կանոնացն

112 Դ ~ հաւաքում եւ խոստովանիմ

113 Բ զամենասուրբ

114 Դ զԵրրորդութիւն

115 Դ զամենասուրբ

116 ԲԴ զԵրրորդութիւն

117 Դ անձինս] եւ մի աստուածութիւն

118 Բ թագաւորութիւնն

119 Դ + մի աստուածութիւն

120 Դ > եւ

121 Դ > ի

122 Դ > եւ

123 Դ Որդի

124 Բ բխումն

125 Դ՝ Հոգի բղխումն] բղխումն Ամենասուրբ Հոգին

աւրհնեալ յաւիտեանս¹²⁶. ամէն:

Խոստովանիմ եւ հաւատամ¹²⁷ զմինն յերրորդութենէն¹²⁸՝ զԲանն Աստուած, Որդին Միածին կամաւ Հաւր եւ Ամենասուրբ¹²⁹ Հոգւոյն էջ յարգանդ ամենամաքուր Կուսին Մարիամու, ծնաւ որպէս մարդ, եւ զկուսութիւնն¹³⁰ ծնաւ ինանարատ պահեաց որպէս զԱստուած, խաչեցաւ եւ¹³¹ թաղեցաւ եւ յարեաւ աստուածապէս¹³², աւերեաց/303թ/ զգոթիս¹³³ եւ համբարձաւ առ Հայր յերկինս, նստաւ ընդ աջմէ Հաւր¹³⁴ նովին մարմնովն, զոր առ¹³⁵ ի Սրբոյ Կուսէն¹³⁶, երկրպագեցաւ յերկնաւորացն¹³⁷ եւ յերկրաւորացս¹³⁸ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն: Գալոց է նովին մարմնովն եւ փառաւք Հաւր՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ սուրբ եւ անմահ թագաւորութեանն ոչ գոյ վախճան¹³⁹, վասն որոյ հաւատամ զծնեալն¹⁴⁰՝ Աստուած ճշմարիտ, եւ զծնաւդն¹⁴¹՝ Աստուածա-

ծին՝ զՍուրբ Կոյսն Մարիամ:

Խոստովանիմ եւ հաւատամ զերկրորդաւորութենէն¹⁴² զդատաւորացն¹⁴³ արդար՝ հոգւոց եւ մարմնոց, եւ զհատուցումն արդարոց եւ մեղաւորաց, եւ ապա¹⁴⁴ վա՛յ եւ եղո՛ւկ է¹⁴⁵ ինձ՝ բազմամեղիս¹⁴⁶, յաւուրն յայնմիկ¹⁴⁷:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՔ ՄԵՂԱՆԱՅ¹⁴⁸, ՅՈՒՑՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՅ, ՏԱՐԱԾՄՈՒՆՔ ԾԱԾԿԵԼՈՅՆ¹⁴⁹, ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԹԱԳՈՒՅԵԼՈՅՆ¹⁵⁰, ԶՈՐ ԲԱԶՈՒՄ ՀԱՌԱԶԱՆԱԻՔ Ի¹⁵¹ ԽՈՐՈՑ ՍՐՏԷ, ԲԱԶՈՒՄ ԱՐՏԱՍՈՒԱԻՔ ԱՍԱՍՅԷ ԱՌԱՋԻՆՈՅԱ ԵՒ¹⁵² ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՅՍՊԷՍ

Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամենակալին՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ ամենայն երկնային զաւրացն, եւ Սրբուհւոյ Աստուածածնին, եւ Սրբոյն¹⁵³ Յովհաննու¹⁵⁴ Կարապետին, եւ

126 Դ + ե յաւիտեանս

127 Դ ~ խաւարամ եւ խոստովանիմ

128 Դ զմի Երրորդութենէն] զմինն յերրորդութենէն

129 Բ ամենասուրբ

130 ԲԴ զկուսութիւն

131 Դ > ե

132 Բ աստուածապէս

133 Դ զգոթիս

134 Դ + ե Սուրբ Հոգւոյն

135 ԲԴ էառ

136 Դ + Մարիամայ

137 Դ յերկնաւորաց

138 Դ երկրաւորացս

139 Բ վախճան

140 Դ զծնեալ

141 Ա զծնաւդն

142 Դ > ե

143 Բ զդատաւորացն

144 Դ ահա] եւ ապա

145 Բ > է

146 Դ մեղաւորիս

147 Դ + յոյս զՔրիստոս ունիմ եւ զՍուրբ Աստուածածինն բարեխօս

148 Դ խոստովանութիւն է մեղաց] խոստովանութիւնը մեղանաց

149 Դ ծածկելոց

150 Բ թաքուցելոցն, Դ չար գործոց

151 Բ > ի

152 Դ > ևոցա եւ

153 Դ > սրբոյն

154 Բ Յովհաննու, Դ Յովաննու

Սրբոյն Ստեփանոսի¹⁵⁵ Նախավկային, եւ սրբոց առաքելոց եւ մարգարէիցն¹⁵⁶, եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ¹⁵⁷, եւ ամենայն սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց¹⁵⁸, եւ առաջի քո, հա՛յր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ, քանզի մեղուցեալ եմ¹⁵⁹ Աստուծոյ եւ Իւր արդար դատաստանին՝ հոգւովս եւ մարմնովս, խորհրդով, բանիւ եւ գործով¹⁶⁰, կամաւ եւ¹⁶¹ գիտութեամբ¹⁶², ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան եւ¹⁶³ ի գնալ ի ճանապարհի, ի ննջել եւ ի¹⁶⁴ յառնել, եւ յամենայն¹⁶⁵ ժամու մեղուցեալ եմ Աստուծոյ պատուիրանացն¹⁶⁶. մեղայ Աստուծոյ եւ քեզ¹⁶⁷:

Մեղուցեալ եմ¹⁶⁸ Ե. զսգայութեամբ¹⁶⁹ մարմնոյս եւ Ե. զաւրութեամբ հոգւոյս, բանական հոգւովս եւ սգալի մարմնովս:

155 Դ. Ստեփանոսի
156 Բ մարգարէից, Դ > եւ մարգարէիցն
157 Դ ~ մեր Լուսաւորչին
158 Բ > եւ երկրաւորաց
159 Դ + առաջի
160 Բ գործ
161 Դ + յակամայ
162 Դ + անգիտութեամբ
163 Դ > եւ
164 Բ > ի
165 Դ ամենայն
166 Դ + վասն որոյ
167 Դ Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, Է. խորհրդոյս եւ Ժ. պատիւիրանացն Աստուծոյ, որ է Ե. անձնատական եւ Ե. հրաժարական: Զանձնատականն չեմ կտարարել եւ ի հրաժարելեացն չեմ հրաժարել, նաեւ ամենայն Աստուծաշունչ Գրոց եւ կանոնաց մեղուցեալ եմ, մեղայ Աստուծոյ] եւ քեզ
168 Դ + հայր սուրբ
169 Դ զգայութեամբ

Մեղուցեալ եմ հոգւովս եւ մասամբ սորա, մարմնովս եւ սգութեամբ սորա¹⁷⁰, եւ երկոտասան¹⁷¹ անդամաւքս¹⁷², ԳՃԿԵ¹⁷³. (365) զաւրութեամբ¹⁷⁴ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ¹⁷⁵:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, աչաւքս ազգի ազգի մեղաւք¹⁷⁶ եւ անաւրէնութեամբ՝ աչաւքս¹⁷⁷ հանապազ յարատ հայելով¹⁷⁸ եւ ցանկանալով¹⁷⁹ յիգականս, յարուականս¹⁸⁰, /304ա/ յանասնականս¹⁸¹: Աչաւքս¹⁸² տեսել¹⁸³ եմ, եւ սրտովս ցանկացել¹⁸⁴ եմ, եւ անձամբս զչարն եմ գործել¹⁸⁵, եւ վասն իմ մեղացն եւ բազում յանցանացն¹⁸⁶,

170 Դ > բանական հոգւովս... ռգայութեամբ սորա
171 Ա երկոյստասան, Դ ԺԲ
172 Դ անդամօք մարմնոյս] անդամաւքս
173 Դ ԳՃ եւ ԿԶ
174 Դ զօթութեամբ
175 Դ մեղուցեալ եմ... եւ քեզ] մեղայ Աստուծոյ:
+ Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, կեղծատրութեամբ խտրականել զմեղս իմ, եւ թագուցանել զչար գործքն իմ, եւ խղճիվ միօք եւ անարժանութեամբ ճաշակելով զմարմին եւ զարիւն Որդոյն Աստուծոյ, եւ զանբարկանալին Աստուծոյ ի բարկութիւն շարժելով ի վերայ իմ, մեղայ Քրիստոսի մարմնոյ եւ արեանն ամենայն ամենայնիս, մեղայ իմանալիս եւ զգալիս, վասն որոյ մեղայ Աստուծոյ
176 Դ անցանքս
177 Դ աչաւքս
178 Դ նայելով
179 Բ + եւ
180 Դ յարուականս եւ իգականս] յիգականս, յարուականս
181 Դ + եւ ի գազանականս
182 Դ աչօք
183 Դ տեսեալ
184 Դ ցանկացել
185 Դ միօքս չար գործքն եմ] անձամբս զչարն եմ գործել
186 Դ անցանքս իմոց] յանցանքս

եւ չար գործոցն չեմ լացել եւ կամ արտասուել առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ¹⁸⁷:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, ականջովս¹⁸⁸ ոչ եղէլսող¹⁸⁹ հրամանին Աստուծոյ եւ սուրբ պատուիրանաց¹⁹⁰ Նորա, այլ ունկնդիր եմ լեալ անառակ եւ չար խաւսից, գոհանակ երգոց, լկտի ծաղուց եւ չար խրատող¹⁹¹, բամբասողաց¹⁹², մատնողաց եւ այլ անպատեհ խաւսից ականջդրութեամբ եւ զրուցատուութեամբ: Ոչ լուսայ զկարիս եւ զվիշտս եղբաւրն, այլ լսեցի զբանս անաւգուտս եւ զվնասիչս¹⁹³ հոգւոյ իմոյ, եւ այլ որ ինչ ականջաց լսողութեան մեղք կայ, ես զամէնն մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ¹⁹⁴:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ,

187 Դ. չեմ արարատել, եւ այլ զինչ որ ի յանցանաց աչաց արեստեան մեղք կայ, զամենայն գործեր եմ, մեղայ Աստուծոյ] եւ չար գործոցն... մեղայ Աստուծոյ եւ քեզ

188 Բ ականջաւս

189 Բ լսող

190 Բ պարտաւիրանացն

191 Բ > խաւսից, գոհանակ երգոց, լկտի ծաղուց եւ չար խրատող

192 Բ բամբասողաց

193 Բ վնասիչս

194 Դ. մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, հոգւորելովս ի հոգ ցարշտեան եւ զպարգեւեալս ինձ վասն բարի լսելոյ, ունկնդիր լեալ եմ անառակ խաւսից անկանջողութեամբ, անխաւս խրատից, բանաւատուաց, մատնողաց, անպարտեհ խաւսից, ականջադրութեամբ եւ զրուցութեամբ եւ ոչ լուս գկարիս եւ զվիշտ եղբօրն, այլ լսեցի զբանս անաւգուտս եւ զվնասիչս հոգւոյ իմոյ, եւ այլ զինչ որ ականջաց լսելոյ գործեցեալ մեղք կայ զամէնն գործեր եմ մեղայ Աստուծոյ] մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, ականջովս... մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ

զբարի խրատն անարգելով եւ զչարն¹⁹⁵ սիրելով¹⁹⁶, հոտոտելովս ի հոտ գարշութեան¹⁹⁷ հեշտասիրելով¹⁹⁸, եւ զպարգեւեալսն ինձ յԱստուծոյ կերակուր¹⁹⁹ խոտան եւ անընդունելի համարելով, եւ ազգի ազգի մեղաւք հոտոտելովս մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ²⁰⁰:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, բերանովս եւ լեզուովս դատարկաբանութեամբ՝ ոչ խաւսեցայ ընդ Աստուծոյ աղաւթիւք, եւ ոչ զԱստուծոյ ընդ մարդկան խաւսեցայ զհոգւոյ եւ զմարմնոյ աւգուտ: Այլ բղխեցի ի բերանոյս բանսկեղծաւորութեան²⁰¹ եւ²⁰² սնապարծութեան՝ սուտ²⁰³ խոսելով²⁰⁴, սուտ վկայելով, սուտ երդմամբ, բամբասելով²⁰⁵, անիծելով, տրտնջելով զեղբաւրէն, հայհոյելով, թշնամանելով, բարկութեամբ բանիւք, լկտի խաւսելով, արբեցութեամբ, շատ ծիծաղելով, ծաղրական եւ անառակ բանս խաւսելով, յիշոցք տալով²⁰⁶, որ դառն

195 Բ զչար

196 Դ > հայր սուրբ... զչարն սիրելով

197 Բ ցարշտեան

198 Դ > հեշտասիրելով

199 Դ > կերակուր

200 Դ. եւ ոչ գոհանալով, վասն որոյ մեղայ Աստուծոյ] եւ ազգի ազգի... մեղայ Աստուծոյ եւ քեզ

201 Դ. կեղծաւորութեամբ

202 Բ Դ > եւ

203 Բ սաւաթ

204 Դ. խոսելով

205 Բ բանբասելով, Դ > բամբասելով

206 Դ. բարկութեամբ յիշոցն տալով] արբեցութեամբ... յիշոցք տալով

մեղք է բերանոյն, ուխտ դնելով Աստուծոյ եւ սրբոց եւ ոչ կատարելով, այլոց չար խրատ տալով, եւ զբարի խրատն անարգելով: Զիմ մեղքն²⁰⁷ թագուցեալ եմ²⁰⁸ հանապազ, եւ զայլոց հրապարակեալ²⁰⁹ եմ՝ այսին առնելով, զայլք²¹⁰ նախատելով²¹¹, կատակելով եւ արհամարհելով, եւ այլ որ ինչ²¹² բերանոյ եւ լեզուի²¹³ մեղք կայ, ես զամէնն²¹⁴ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ. առաջի եղբաւրն բարի ասել եւ զկնի պարսաւել²¹⁵:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, սրտովս զչարն խորհելով՝ շնութիւն, պոռնկութիւն, գիճութիւն, աղտեղութիւն, |304բ| չարակնութիւն, ազահութիւն, գողութիւն, նենգութիւն, սպանութիւն, ամբարտաւանութիւն²¹⁶, անզգամութիւն, եւ²¹⁷ այլ որ ինչ մտաց եւ խորհրդոց գործ է²¹⁸, ես զամէնն²¹⁹ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ²²⁰:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, ձեռաւքս՝ դատարկութեամբ²²¹ եւ անգործ կալով, ոչ աշխատիլ²²² վաստակաւք եւ կերակրել²²³ զաղքատս եւ զկարաւտեալս²²⁴, ոչ տարածեցի առաջի Աստուծոյ յաղաւթս²²⁵ եւ ոչ համբարձի առ Տէր սրբութեամբ²²⁶: Այլ մեղուցեալ եմ ի գործս ձեռաց²²⁷՝ գողանալով եւ զրկելով զընկերն²²⁸ ի ծածուկ եւ յայտնի յափշտակելով անիրաւութեամբ²²⁹, անողորմ հարկանելով զմարդ²³⁰ եւ զանասուն, յանսուրբ եւ ի պեղծ²³¹ տեղիս մերձենալով եւ շաւշափելով անխղճաբար²³², եւ այլ որ ինչ ձեռաց մեղք կայ, ես զամէնն²³³ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ²³⁴:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, ոտաւքս²³⁵, զի գործել ձանձրացել եմ²³⁶ զբարիս²³⁷՝ յեկեղեցին եւ²³⁸ յա-

զամենն... եւ քեզ

221 Դ-դատարկ

222 Բ-աշխատիլոյ, Դ-աշխատելով

223 Դ-կերակրելով

224 Դ-> եւ զկարաւտեալս

225 Դ-աղօթս

226 Դ-> եւ ոչ համբարձի առ Տէր սրբութեամբ

227 Դ-ձեռացս

228 Դ-զնկերն

229 Դ-> յափշտակելով անիրաւութեամբ

230 Բ-զմարդն

231 Դ-պիղծ

232 Դ-> անխղճաբար

233 Բ-զամեն

234 Դ-գործել եմ, մեղայ Աստուծոյ] մեղուցեալ եւ

քեզ

235 Դ-ոտիւքս

236 Դ-ի գործս] գործել ձանձրացել եմ

237 Դ-բարիս

238 Դ-յեկեղեցիս] յեկեղեցին եւ

207 Բ-զմեղքն

208 Դ-թագուցանելով] թագուցեալ եմ

209 Բ-հրապարակել, Դ-հրապարակել

210 Դ-զայլոք

211 Ա-նախտելով

212 Դ-~ զինչ որ

213 Բ-լեզու

214 Բ-զամեն

215 Դ-զամենն գործել եմ մեղայ Աստուծոյ] եւ զամենն... զկնի պարսաւել

216 Դ-> գողութիւն... ամբարտաւանութիւն

217 Դ-+ զայլ

218 Դ-գործք կայ] գործ է

219 Բ-զամեն

220 Դ-եւ միայն եմ մեղուցեալ, մեղայ Աստուծոյ] ...

ղաւթս²³⁹ ի ժամատեղն ծուլա-
ցեալ²⁴⁰ եմ կանգնել, եւ ի յուխտս
սրբոց եւ ի տեսս հիւանդաց²⁴¹
եւ ի պէտս եղբարցն²⁴², հեղա-
ցեալ²⁴³ եմ գնալ, եւ²⁴⁴ ի մեղս եւ ի
չար ճանապարհ յաւժարութեամբ
սրտիս ընթացայ ի պոռնկութիւն,
ի շնութիւն, ի գողութիւն, ի խաղս,
ի թատերս եւ յամենայն տեղիս
մեղաց ի յարբեցութիւն²⁴⁵ եւ²⁴⁶
բովանդակ ամենայն²⁴⁷ անդա-
մաւքս մեղուցեալ եմ Աստուծոյ:
Աւելի հանգել եմ²⁴⁸ մարմնովս,
եւ անկողնով²⁴⁹ հեշտացել²⁵⁰ եմ՝
չատ ի քուն լինելովն²⁵¹, եւ այլ
ամենայն²⁵² մեղաւք եւ յանցա-
նաւք, որով²⁵³ տկարանայ եւ յաղ-
թի սղալոտ²⁵⁴ բնութիւնս, ես²⁵⁵
մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ,
մեղայ Աստուծոյ եւ քեզ²⁵⁶:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ,
ի հրապարակս նստելով, որ է

աղբիւր մեղաց՝ եւ զառաջնորդ,
եւ զեղբայր, եւ զընկեր²⁵⁷, եւ
զամենայն մարդ բամբասելով²⁵⁸,
զծերս չպատուելով, զեղբայրն²⁵⁹
չսիրելով ըստ պատուիրանին,
չողորմելով աղքատին, չի գթա-
լով²⁶⁰ ի տնանկն²⁶¹ եւ ի կարաւ-
տեալս, հիւանդին չի սպասա-
ւորելով²⁶², տրտմեցելոյն չցա-
ւակցելով, զանձն²⁶³ արդար եւ
իմաստուն համարելով, եղբաւրն
[305ա] մորոս եւ յիմար²⁶⁴ կոչե-
լով, զտաւնս սրբոցն չպատուելով,
զաւր միաշաբաթին չմեծարելով,
դիւական²⁶⁵ կրիւք թերահաւա-
տութեամբ եւ հայհոյութեամբ առ
Աստուած եւ առ հրեշտակս եւ²⁶⁶ ի
Սուրբ Եկեղեցիս եւ առ ամենայն
սուրբս²⁶⁷ մեղուցեալ եմ: Վասն²⁶⁸
որոյ²⁶⁹ մեղայ Ամենասուրբ²⁷⁰ Եր-
րորդութեանն²⁷¹՝ Հաւր եւ Որդ-
ւոյ²⁷² եւ Սուրբ Հոգւոյն, մեղայ
եւ ամենայն երկնային զաւրացն,

239 Դ + եւ

240 Դ ծուլացեր

241 Դ ~ եւ ի քեսս հիւանդաց եւ ի յովսրս սրբոց

242 Դ > ի պէտս եղբարցն

243 Դ հեղգացեր

244 Դ > եւ

245 Բ յարբեցութեամբ, Դ > ի պոռնկութիւն...
յարբեցութիւն

246 Դ + այլ

247 Դ ~ ամենայն բովանդակ

248 Դ > անդամաւքս... հանգել եմ

249 Դ անկողնովս մեղուցեալ եմ] անկողնով

250 Դ հեշտացեր

251 Դ լինելով

252 Դ + իրօք

253 Դ որ

254 Դ սղալանով

255 Դ + միայն

256 Դ հոգովս եւ մարմնովս եւ խորիքով, բանիս եւ
գործով, մեղայ Աստուծոյ] առաջի Աստուծոյ... եւ քեզ

257 Դ ~ եւ զեղբայր, եւ զընկեր, եւ զառաջնորդ

258 Բ բանբասելով, Դ բամբասելով

259 Դ զեղբայր

260 Դ չգթալով] չի գթալով

261 Դ տնանկն

262 Բ զսպասավորելով, Դ չսպասատրելով] չի
սպասատրելով

263 Դ + իմ

264 Դ ~ յիմար եւ մորոս

265 Դ այլ դիւական

266 Բ > եւ

267 Դ ~ առ սուրբս եւ ի սուրբ եկեղեցիս

268 Դ > մեղուցեալ եմ վասն

269 Դ որով

270 Բ ամենայնսուրբ, Դ սուրբ

271 Դ երրորդութեան եւ մի աստուածութեան]
երրորդութեան

272 Բ Ռոդի

մեղայ եւ Սրբուհւոյ²⁷³ Աստուածածնին, եւ Սրբոյն Յովհաննու²⁷⁴ Կարապետին, եւ Սրբոյն Ստեփաննոսի²⁷⁵ Նախավկային, մեղայ սրբոց առաքելոց եւ մարգարէից, մեղայ եւ ամենայն սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց, մեղայ Սուրբ Եկեղեցւոյ եւ տաճն²⁷⁶ պատուիրանացն Աստուծոյ, որ է Ե. յանձնառական եւ Ե. հրաժարական²⁷⁷: Զյանձնառականն չեմ կատարել եւ ի հրաժարականէն²⁷⁸ չեմ հրաժարել եւ այլ ամենայն աստուածային պատուիրանացն²⁷⁹, մեղուցեալ եմ²⁸⁰ հոգւովս, եւ մարմնովս, եւ խորհրդով, բանիւ եւ²⁸¹ գործով²⁸², եւ ամենայն սգայարանաւքս²⁸³ մեղուցեալ եմ²⁸⁴ առաջի Աստուծոյ եւ քեզ²⁸⁵:

Մեղուցեալ եմ²⁸⁶, հայր սուրբ, է. մահու չափ մեղաւք՝ հպար-

տութեամբ²⁸⁷, նախանձու²⁸⁸, բարկութեամբ²⁸⁹, ծուրութեամբ²⁹⁰, ագահութեամբ²⁹¹, որկորամոլութեամբ²⁹², պոռնկութեամբ²⁹³. մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ եւ քեզ²⁹⁴, մեղայ Աստուծոյ եւ քեզ²⁹⁵:

Մեղուցեալ եմ, հայր սուրբ, ամբարտաւանութեամբ, հպարտութեամբ, անձնահաճութեամբ²⁹⁶, փառասիրութեամբ²⁹⁷, կեղծաւորութեամբ, եւ բարի կարծել²⁹⁸ զանձն իմ²⁹⁹, վասն գովութեան բարիք եմ արարել³⁰⁰ պահք³⁰¹, եւ աղաւթ³⁰², եւ³⁰³ ողորմութիւն, երեսպաշտութիւն, մարգահաճութիւն³⁰⁴: Հպարտացել եմ ընդդէմ³⁰⁵ առաջնորդին եւ ընդդէմ այնոցիկ, որոց³⁰⁶ պարտ էր

273 Դ. Տար եւ... սրբուհոյ] սուրբ

274 Բ. Յովհաննու

275 Բ. Ստեփաննոսի

276 Բ. տաճ

277 Բ. + էն

278 Բ. > զյանձնառականն չեմ կատարել եւ ի հրաժարականէն

279 Դ. եւ սուրբ երեւորակապեաց եւ երեւորակապ եւ ամենայն սրբոց եւ սրբոյ եկեղեցոյ] եւ Սրբոյն Յովհաննու... աստուածային պատուիրանացն

280 Դ. մեղայ] մեղուցեալ եմ

281 Բ. > եւ

282 Դ. > եւ խորհրդով, բանիւ եւ գործով

283 Բ. սգայարանաւքս

284 Դ. մեղայ Աստուծոյ] մեղուցեալ եմ

285 Դ. ամենայն մեղք մարմնական, որ ընդ մարմինն անցանէ, եւ մարմնովս գործեր եմ, նոյնպէս եւ զհոգեւոր անցանք եւ հոգովս մեղուցեր եմ, վասն որոյ մեղայ Աստուծոյ] առաջի Աստուծոյ եւ քեզ

286 ԱԲ. > եմ

287 Դ. + մասեամբ նորին

288 Դ. > նախանձու

289 Դ. + մասեամբ նորին

290 Դ. + մասեամբ նորին

291 Դ. + մասեամբ նորին

292 Դ. որկորամոլութեամբ մասամբ նորին] որկորամոլութեամբ

293 Բ. պոռնկութեան

294 Բ. > եւ քեզ

295 Դ. սրբամոլութեամբ եւ մասեամբ նորին, որ զամենայն բարի խաբանէ պոռնկութեամբ, որ տաճար Աստուծոյ ապականէ, մեղայ Աստուծոյ] պոռնկութեամբ... եւ քեզ

296 Դ. յանձնառականութեամբ

297 Բ. > հպարտութեամբ, անձնահաճութեամբ, փառասիրութեամբ

298 Բ. գործել

299 Դ. > եւ բարի կարծել զանձն իմ

300 Դ. արարել

301 Դ. պահքս

302 Դ. աղօթս

303 Դ. > եւ

304 Դ. + եւ արարել

305 Դ. > ընդդէմ

306 Դ. որ

ինձ³⁰⁷ հնազանդութիւն առնել³⁰⁸ եւ ոչ արարի, եւ այլ որ ինչ հպարտութեան³⁰⁹ եւ զամբարտաւանութեան դիւին գործ է՝ սնապարծութեամբ³¹⁰ ընդ երեսս գովել զընկերն եւ մատնել զնա³¹¹ սատանայի, ես զամէնն գործել եմ եւ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ եւ քեզ³¹², մեղայ Աստուծոյ եւ քեզ³¹³:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, նախանձու, ատելութեամբ, հակառակութեամբ եւ անհնազանդութեամբ, նենգութեամբ, խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ³¹⁴, |305բ| սէր ոչ ունելով յեղբայրս եւ յընկերս³¹⁵ իմ³¹⁶, եւ ընդ բարի անունս³¹⁷ նոցա եւ ընդ ամենայն բարութիւնս տրտմելով եւ ընդ չար համբաւն ուրախանալով, վիրաւորել եմ զաւտար³¹⁸ եւ զընկեր³¹⁹ խռով կալով, ռիսս պահելով եւ չարին չար հատուցանելով, զի էր չար նախանձ ի սրտի իմում, եւ այլ որ

ինչ³²⁰ նախանձու դիւին գործ է, ես զամէնն³²¹ գործել³²² եմ, եւ մեղուցեալ եմ³²³ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ³²⁴:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, բարկութեամբ՝ բարկացայ ի վերայ եղբարց, եւ ընկերաց սուտ եւ զուր ասացի, տրտմեցուցի եւ վիրաւորեցի զնոսա, եւ թէ հնար գոյր սպաննէի, եւ այլ ինչ որ բարկութեան եւս դիւին գործ է, ես զամէնն³²⁵ գործել³²⁶ եմ եւ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ³²⁷:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, ծուլութեամբ ի ժամ³²⁸ աղաւթիցն³²⁹, ի ժամ Սուրբ Պատարագին, յեկեղեցին³³⁰ քնով եւ ձանձրութեամբ³³¹ եւ դանդաղելով եմ կացել³³², բերանովս յասել³³³, եւ մտաւքս ընդ վայր շրջելով³³⁴, սաղմոսից եւ աղաւթից³³⁵ պաւկասութեամբ՝ հասարակաց եւ

307 Դ > ինձ

308 Դ- հնազանդել] հնազանդութիւն առնել

309 Բ > առնել եւ ոչ արարի, եւ այլ որ ինչ հպարտութեան

310 Բ սնապարծութիւնս

311 Բ > գնա

312 Բ > եւ քեզ

313 Դ- վասն որոյ մեղայ Աստուծոյ] եւ այլ որ ինչ... մեղայ Աստուծոյ եւ քեզ

314 Դ > հակառակութեամբ... յանդգնութեամբ

315 Բ յընկերսն

316 Դ- ընկերիս եւ ընդ բարի արեաց] յեղբայրս եւ յընկերս իմ

317 Դ- անուն

318 Դ- զօրայրս

319 Դ- զընկերս

320 Բ > նախանձ ի սրտի իմում, եւ այլ որ ինչ

321 Բ զամէն

322 Բ գործեալ

323 Բ > եւ մեղուցեալ եմ

324 Դ- վասն որոյ մեղայ Աստուծոյ] եւ այլ որ ինչ... մեղայ Աստուծոյ եւ քեզ

325 Բ զամէն

326 Բ գործեալ

327 Դ > Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, բարկութեամբ... մեղայ Աստուծոյ եւ քեզ

328 Դ- ծուլացել եմ] ի ժամ

329 Դ > եւ

330 Դ- եւ եկեղեցին] յեկեղեցին

331 Դ ~ քնով եւ ձանձրութեամբ

332 Դ- կացել] եմ կացել

333 Դ- բերանս ասել] բերանովս յասել

334 Դ- շրջել

335 Դ- սաղմոսի] սաղմոսից եւ աղաւթից

առանձնականին³³⁶, ուսումնաստեցութեամբ աներկիւղ եւ համարձակ շրջելով³³⁷, եւ լիբր երեսաւք մտանել յեկեղեցին եւ մերձենալ³³⁸ ի սրբութիւն սրբութեանցն³³⁹:

Մեղայ Աստուծոյ, զի զամենայն աւուրս իմ ծուլութեամբ եմ անցուցել՝ ընդդէմ Աստուծոյ աւրինացն եւ իմ սուրբ կարգիս: Կարող էի առնել բարութիւնս եւ ոչ արարի, այլ եւ ի³⁴⁰ ժամ³⁴¹ խոստովանութեանն³⁴² ծուլացայ եւ ոչ խոստովանեցայ զմեղս իմ բանիւ եւ գործով, եւ այլ որ ինչ ծուլութեան եւ ձանձրութեան դիւին գործ է, ես զամէնն³⁴³ գործել եմ եւ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ³⁴⁴:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, ազահոլութեամբ³⁴⁵՝ զամենայն որ³⁴⁶ ինչ յաշխարհի էր³⁴⁷, ջանացել եմ³⁴⁸

որ ժողովէի³⁴⁹՝ ոսկի եւ արծաթ, հանդերձս³⁵⁰ պատուականս եւ յամենայն գեղեցկութիւնս աշխարհիս: Ազահացել³⁵¹ եմ՝ ուտելով եւ ըմպելով³⁵², անողորմ եւ անգութ գոլով, եւ ոչ ըստ անձին հոգալ զկարիք³⁵³ եղբաւրն, ցանկացել³⁵⁴ եմ³⁵⁵ ընչից եղբաւրն վասն իմ ազահոլութեանս³⁵⁶, եւ այլ որ ինչ ազահոլութեան դիւին գործ է, ես զամէնն³⁵⁷ գործել եմ եւ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ³⁵⁸:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, որովայնամոլութեամբ՝ յառաջ քան զժամ³⁵⁹ Սուրբ Պատարագին³⁶⁰ եւ առանց արձակման ժամու կերել եմ եւ ըմպել, եւ յուտելն առաւել անյագ/306ա/աբար՝ ուտելով եւ գինի ըմպելով այնքան, որ³⁶¹ արբեցայ³⁶², զճաշակելիս խառնակեցի³⁶³ յանմաքուր կերակուրս եւ յըմպե-

336 Դ. առանձնականին

337 Դ. > շրջելով

338 Դ. մարչել

339 Դ. սրբոց եւ լրբաբար շօշափելով զիսացն եւ Սուրբ Անդարանն եւ զսուրբ խորհուրդս եւ զամենայն սրբութիւն, մեղայ Աստուծոյ] սրբութեանցն

340 Բ > ի

341 Բ + առատուր

342 Բ խոստովանութիւն

343 Բ զամէն

344 Դ. մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, զի ես զիմ ժամանակն սրբութեամբ ոչ անցուցի, այլ չսրբութեամբ ի խեղկապակութիւն, ի ծաղր եւ ընդ վայր բանս եւ ի գործս, կարող էի առնել բարութիւն բանիս եւ գործով եւ ոչ արարի, այլ ի ժամ խոստովանութեան ծուլացայ եւ ոչ խոստովանեցայ ճշմարտութեամբ զմեղս իմ, վասն որոյ մեղայ Աստուծոյ] մեղայ Աստուծոյ, զի զամենայն... մեղայ Աստուծոյ եւ քեզ

345 Բ ազահոլութիւն

346 Դ. > որ

347 Դ. աշխարհի] յաշխարհի էր

348 Դ. ջանացայ] ջանացել եմ

349 Դ. ժողովի

350 Դ. եւ հանդերձս

351 Բ ազահեղացել

352 Դ. եւ ուրելիք եւ ըմպելիք եւ զամենայն գեղեցկութիւն եւ զմեծութիւն աշխարհիս ցանկացել եմ] պատուականս... ուրելով եւ ըմպելով

353 Դ. զկարիքս

354 Դ. ցանկացել

355 Դ. + անողորմ եւ անգութ գոլով եւ

356 Դ. ազահոլութեան մեղայ Աստուծոյ] իմ ազահոլութեանս

357 Բ զամէն

358 Դ. > եւ այլ որ ինչ... մեղայ Աստուծոյ եւ քեզ

359 Դ. > զժամ

360 Դ. զսուրբ պատարագն] սուրբ պատարագին

361 Բ որ

362 Դ. ուրելոյ եւ ըմպելոյ ազահաբար] կերել եմ... որ արբեցայ

363 Դ. խառնեցի

լիս³⁶⁴, այլ եւ պահք աւրն միանա-
շակ³⁶⁵ չեմ կացել, եւ ոչ զպահքն³⁶⁶
սրբութեամբ պահել, այլ լուծա-
նելով ի զանազան կերակուրս եւ
յրմպելիս³⁶⁷ առանց ժամու տարա-
ժամ³⁶⁸ ճաշակելով որպէս զանա-
սուն եւ ոչ գոհանալով զՏուողէն³⁶⁹
բարեաց³⁷⁰, զբազմաց³⁷¹ կարաւ-
տութիւն տեսանելով եւ անտես
առնելով՝ ես քան զչափն առա-
ւել լիացել եմ³⁷², ուխտ եմ դրել³⁷³
Աստուծոյ, թէ զայս ինչ չուտեմ³⁷⁴
եւ ոչ եմ կատարել³⁷⁵ վասն իմ որ-
կորամոլութեանս³⁷⁶, եւ այլ որ ինչ
որովայնամոլութեան դիւին գործ
է, ես զամէն³⁷⁷ գործել եմ, եւ մե-
ղուցեալ եմ առաջի Աստուծոյ,
մեղայ Աստուծոյ եւ քեզ³⁷⁸:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ,
պոռնկութեամբ, շնութեամբ,
բղջախոհութեամբ, չար մտածու-
թեամբ, մարմնաշարժութեամբ,
գիծութեամբ³⁷⁹: Գիճացայ յերազի

եւ հաւանեցայ յարթնութեանն³⁸⁰,
հեշտացայ ի խաւսս կանանց³⁸¹
եւ³⁸² ի խեղկատակութիւնս, եւ
յամենայն³⁸³ աղտեղի բանս, եւ ի
ձայն³⁸⁴ երգոց շարժեցայ յախտս եւ
հաւանեցայ մեղացն³⁸⁵, եւ անձամբ
կատարեցի զգործ մեղացն³⁸⁶: Մե-
ղայ զանազան եւ զազիր խորհր-
դով³⁸⁷ ի գիշերի եւ ի տուրնջեան
քնով եւ յարթնութեան³⁸⁸ պէս-
պէս կերպարանաւք³⁸⁹ եւ անա-
ռակ³⁹⁰ ցանկութեամբ³⁹¹, արուա-
կան, իգական, անասնական³⁹²,
եւ շարժմամբ, եւ ախտից³⁹³ հոս-
մամբ, աղտեղի խորհրդով եւ ցնո-
րեալ մտաւք յեկեղեցին³⁹⁴, ի ժամ
աղաւթիցն³⁹⁵ առաջի Աստուծոյ
եւ Սրբոյ³⁹⁶ Սեղանոյն³⁹⁷ կանգ-
նել³⁹⁸ եմ եւ զԱրարիչն Աստուած
բարկացուցել³⁹⁹ եմ, եւ զհոգիս իմ
մեղաւք⁴⁰⁰ սեւացուցել⁴⁰¹ եմ, եւ

364 Բ յըմբելիս, Դ ըմպելիս

365 Բ միճաշակ

366 Բ պահքն

367 Դ զձեթ եւ զգինի] այլ եւ պահք... եւ յըմպելիս

368 Դ > փարաժամ

369 Բ զՏուաղէն, Դ զԱստուծոյ

370 Դ > բարեաց

371 Դ բազմաց

372 Դ > եւ անպես առնելով... լիացել եմ

373 Դ դրել

374 Դ > թէ զայս ինչ չուտեմ

375 Դ կատարել

376 Դ յորովայնամոլութեանս

377 Բ զամէն

378 Դ մեղայ Աստուծոյ] եւ այլ որ ինչ... մեղայ
Աստուծոյ եւ քեզ

379 Դ > չար մտածութեամբ, մարմնաշարժութեամբ,
գիծութեամբ

380 Դ արթնութեամբ

381 Դ ~ կանանց բանս

382 Դ > եւ

383 Դ ամենայն

384 Դ ձայնս

385 Դ մեղաց

386 Դ > եւ անձամբ կատարեցի զգործ մեղացն

387 Դ խորհրդովք

388 Դ > քնով եւ յարթնութեան

389 Բ կերակրաւք

390 Դ աղտեղի

391 Բ ցանկութեան

392 Դ > զազանական մարմնով

393 Դ աղտեղի

394 Դ > յեկեղեցին

395 Դ > ի սուրբ եկեղեցին

396 Բ սրբոյն, Դ սուրբ

397 Դ սեղանոյս

398 Ա կանկնել, Դ կանգնեալ

399 Դ բարկացուցեալ

400 Դ > իմ մեղաւք

401 Դ սեւացուցեալ

այլ որ ինչ պոռնկութեան դիւին գործ է, ես զամէնն անձամբս բոլոր գործել⁴⁰² եմ, եւ մեղուցեալ եմ առաջի Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ⁴⁰³:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, վեց⁴⁰⁴ շարժամբս եւ է. սգայութեամբս⁴⁰⁵՝ զվեց⁴⁰⁶ աստիճան մեղացն⁴⁰⁷ գործել⁴⁰⁸ եմ, զիմ Արարիչն բարկացուցել⁴⁰⁹ եմ, զիմ պահապան հրեշտակն դառնացուցել⁴¹⁰ եմ, իմ Սուրբ⁴¹¹ Լուսաւորչի/306բ/նաւրինացն եւ ի կանոնացն սեւերես եմ, որ չեմ կատարել, վասն որոյ մեղայ Աստուծոյ, մեղայ եւ իմ⁴¹² պահապան հրեշտակին, որ զիս կու⁴¹³ պահէ, մեղայ եւ իմ Սուրբ Լուսաւորչին, եւ քեզ՝ հա՛յր սուրբ, եւ արտաքոյ յարատ հայելով, եւ պաքշոտութեամբ մտաւք ի հետ ընթանալով եւ շողախիլ⁴¹⁴ ընդ ամաւթալիսն⁴¹⁵:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ,

իմ⁴¹⁶ քրիստոնէութենէս⁴¹⁷ եւ իմ կարգիս⁴¹⁸՝ անարժանութեամբ ունելով եւ ոչ սրբութեամբ, որպէս վայել է սուրբ կարգիս: Զի չար գործովք⁴¹⁹, իբրեւ զմի⁴²⁰ ի մարդկանէ, զկեանս իմ անցուցեալ եմ⁴²¹, եւ յամենայն⁴²² ժամու Աստուծոյ եւ իմ սուրբ կարգիս մեղուցեալ եմ⁴²³. մեղայ Աստուծոյ եւ իմ սուրբ կարգիս⁴²⁴:

Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, մեղայ⁴²⁵, հա՛յր սուրբ, զի⁴²⁶ իծննդենէ⁴²⁷ Աւագանին մինչեւ ցայսաւր⁴²⁸ ի մեղաց չեմ դադարել⁴²⁹, այլ զամենայն մեղս⁴³⁰ գործել⁴³¹ եմ⁴³²՝ զներելիս եւ զաններելիս, զհոգեկանս⁴³³ եւ զմարմնականս,

416 Դ զիմ

417 Բ քրիստոնէութիւնս, Դ քրիստոնէութեանս եւ քահանայ

418 Դ + զի

419 Դ > չար գործովք

420 Դ + անցաւոր եւ անիմաստ

421 Դ ~ անցուցեալ եմ զկեանս իմ

422 Դ յամենայն ժամ զի ամենայն] եւ յամենայն

423 Բ > եւ յամենայն... կարգիս մեղուցեալ եմ, Դ ~ մեղուցեալ եմ Աստուծոյ եւ սուրբ կարգիս

424 Դ արդ, զորն ասացից եւ կամ զորն թուցից, զի թէ ամենայն մարմինս լեզու առեալ եւ ի մի վայր ժողովեցեն, զմի ի հագարաց մեղաց իմոց, զոր արարի, ոչ կարեն պարմել, զի որ ամենայն դարս մարդիկ մեղան, եւս առաւել քան զնոսս եւ մեղուցեալ եմ] մեղայ Աստուծոյ եւ իմ սուրբ կարգիս

425 Դ > մեղայ Աստուծոյ, մեղայ

426 Դ > զի

427 Բ ծնողութենէ

428 Դ + ոչ օր մի եւ ոչ ժամ մի եւ ոչ պահ մի զկամս Աստուծոյ չեմ կարարեր

429 Դ արարեր

430 Դ մեղք

431 Դ գործեր

432 Բ > եմ

433 Բ զհեգեկանս

402 Բ գործեալ

403 Դ մեղայ Աստուծոյ ամենայն ժամ] եւ այլ որ ինչ... մեղայ Աստուծոյ եւ քեզ

404 Դ զ

405 Դ > Է. սգայութեամբս

406 Դ զ

407 Դ մեղաց գործ] մեղացն

408 Դ գործեր

409 Դ բարկացուցեր

410 Դ դառնացուցեր

411 Դ > սուրբ

412 Բ > իմ

413 Բ > կու

414 Բ շողախիլ

415 Դ կանոնացն եւ իմ պարտաւորանացն սեւերես եմ, որ զիրամանք կանոնացն չեմ կարարեր, վասն որոյ մեղայ Աստուծոյ եւ Սուրբ Լուսաւորչին օրինացն] արինացն եւ ի կանոնացն... ընդ ամաւթալիսն

զխորհրդոց եւ զմտաց⁴³⁴, բանից եւ զգործոց⁴³⁵: Զամենայն մեղս գործեալ եմ յաւժար⁴³⁶ կամաւք եւ չար սովորութեամբ, եւ մեղք չէ մնացել⁴³⁷, որ չեմ գործել⁴³⁸ իմ կամաւ⁴³⁹ եւ⁴⁴⁰ գիտութեամբ⁴⁴¹, եւ ոչ ի հարկէ եւ⁴⁴² կամ ի բռնութենէ մարդկան մեղք զայն չեմ գործել, որ ձեռս չէ հասել եւ կարողութիւնս չէ բերել: Բայց այլ ամենայն մեղք մարմնական, որ ընդ մարմինն անցանէ, ես մարմնովս գործել եմ, նոյնպէս եւ հոգեւոր յանցանաւք, ես հոգեւոր յանցել եմ առաւել քան զամենայն որդիս մարդկան: ՅԱստուծոյ չեմ երկնչել եւ ի մարդկանէ չեմ ամաչել, եւ իմ խիղճ մտացս զիս չէ դատել, այլ անառակ վարիւք եւ անասման ընթացիւք զկեանս իմ անցուցեալ եմ: Եւ կամ յոյժ ամաւթով յԱստուծոյ, ի հրեշտակաց եւ ի մարդկանէ բոլորովին եմ ախտացեալ՝ յոտից մինչեւ ցզլուկս չիք առողջութիւն՝ ո՛չ հոգեւոր եւ ո՛չ մարմնով, ո՛չ խորհրդով եւ ո՛չ բանիւ եւ ո՛չ մտաւք, այլ ամենայն

նիւ վնասակար եւ պար/307ա/տական⁴⁴³ եմ Աստուծոյ եւ իմ սուրբ կարգիս եւ քեզ՝ հա՛յր սուրբ⁴⁴⁴:

Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ եւ քեզ⁴⁴⁵, հա՛յր սուրբ, զի ապաշխարութեան լուծ եմ առել⁴⁴⁶ եւ⁴⁴⁷ ծուլութեամբ եւ հեղգութեամբ⁴⁴⁸ չեմ կատարել⁴⁴⁹, մեղայ Աստուծոյ եւ քեզ⁴⁵⁰:

Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ,

443 Բ պարպակ

444 Դ զի յոյթեան մօր խնոյ մինչեւ ի յես անարժան շունչ մեղուցեալ եմ, որ ոչ կարեմ պարմել մի ըստ միտքէ, եւ թէ չարին խափմամբ մոռացայ եւ ծածկեցաւ յինէն, եւ ոչ երկիւղ մտաւ գիտեալորս առ ի խտարովանել զմեղս իմ: Թողութիւն շնորհեալ ինձ, հա՛յր սուրբ, որպէս զանառակ որդին. «Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո» (Ղուկ. ԺԵ. 18): Փոշեման եմ յիմ անթիւ մեղացն, զոր գործեալ եմ՝ ակն ունելով Աստուծոյ բարեբարութեանն, որ ոչ կամի զմահ մեղատորին, այլ զգաւնալ նորս: Եւ ես մեղուցեալ ձերով սուրբ աղօթիւք, զի դարձ արարից ի մեղաց, եւ ապաշխարութեամբ կեցուցից զեղի իմ, մեղայ Աստուծոյ: Այլ եւ մեղայ ամենայն պարտաւորանացն Աստուծոյ՝ յանձնաւելեացն եւ ի հրաժարելեացն, զի ոչ զանձնառական կարարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս առի եւ օրինացն հեղգացայ, ի կարգ քահանայութեան հրափրեցայ եւ գործովս ուրացեալ գրայ, զիւրելով զչարիս՝ կամաւ կորացայ եւ ի բարեաց գործոց եւ ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Զո՛րն ասեմ եւ կամ գո՛րն խտարովանիմ, զի անթիւ եմ անցանք իմ, անասելի եմ անօրէնութիւնք իմ, անքաւելի եմ մեղք իմ, եւ անբժշկելի եմ վէրք իմ, եւ աննեղելի եմ անցանք իմ. մեղայ Աստուծոյ, հա՛յր սուրբ, մեղայ Տեառն մերոյ եւ քեզ: Մեղուցեալ եմ, հա՛յր սուրբ, զի բարոյն խափիչ եղայ եւ չարին յորդորից, մեղայ Աստուծոյ: Մեղք զայն չեմ գործեր, զոր աչքս չէ րեսեր, զոր ձեռքս չէ հասեր, զոր ուրքս չէ գնացեր, զոր ականջս չէ լսեր, զոր միւրքս չէ հասեր, զոր ինչ ստարանայ մեղք՝ չարիք է սերմաներ, զամէն գործեր եմ, մեղայ Աստուծոյ] մարդկան մեղք զայն չեմ գործել... սուրբ կարգիս եւ քեզ՝ հա՛յր սուրբ

445 Դ մեղուցեալ եմ] մեղայ Աստուծոյ.. եւ քեզ

446 Դ առեր

447 Բ > եւ

448 Բ հեղուցեամբ, Դ վասն ազաւորութեան եւ ծուլութեան եւ հեղգութեան] ծուլութեամբ եւ հեղգութեամբ

449 Դ կարարել

450 Դ եւ առաջի քո] եւ քեզ

434 Բ մտաց

435 Բ գործոց, Դ զբանից եւ զգործոց] բանից եւ գործոց

436 Դ յօժարական] զամենայն մեղս գործեալ եմ յաւժար

437 Դ մնացել

438 Դ գործել

439 Բ կամաւք, Դ կամօքս

440 Բ > եւ

441 Դ + եւ յօժարութեամբ

442 Դ > եւ

կեղծաւորութեամբ՝ խոստովանել զմեղս իմ եւ թագուցանել զչար գործս իմ, եւ խղճիւ, մտաւք եւ անարժանութեամբ ճաշակելով զՍուրբ Մարմին եւ զԱրիւն Որդւոյն Աստուծոյ, եւ զանբարկանալին Աստուած ի բարկութիւն շարժելով ի վերայ իմ, վասն որոյ մեղայ Քրիստոսի Սուրբ Մարմնոյ եւ Արեանն Հոգւովս եւ մարմնովս ամենայն, ամենայնիւ յիմանալիս եւ ի սգալիս մեղուցեալ եմ Աստուծոյ եւ քեզ⁴⁵¹:

Ո՛հ, որ յերեւելիս⁴⁵² աստուած-պաշտեալս⁴⁵³ եւ աղաւթող, եւ ի ծածուկ թերահաւատ եւ ծոյլ եւ յամենայն⁴⁵⁴ բարեաց ունայն: Յերեւելիս⁴⁵⁵ կուսան, եւ ի ծածուկ՝ պոռնիկ, յերեւելիս⁴⁵⁶ սուրբ, եւ ի ծածուկ՝ պեղծ⁴⁵⁷, յերեւելիս⁴⁵⁸ ժիր, եւ ի ծածուկ՝ ծոյլ, յերեւելիս⁴⁵⁹՝ պարկեշտ, եւ ի ծածուկ՝ ագահ, յերեւելիս⁴⁶⁰՝ ողորմած, եւ ի ծածուկ՝ զրկող⁴⁶¹, յերեւելիս⁴⁶²՝ աղքատասէր, եւ ի ծածուկ՝ աղքատատեաց, յերեւելիս⁴⁶³՝ առաքինի, եւ ի ծա-

ծուկ՝ մոլի, յերեւելիս⁴⁶⁴՝ գովելի, եւ ի ծածուկ՝ պարսաւելի:

Արդ, զորն ասացից կամ զորս թուցից: Զի թէ ամենայն մարմին լեզու եղեալ եւ ի մի վայր ժողովեացին, զմի ի հազարաց մեղաց իմոց ոչ կարեն պատմել: Զի զոր յամենայն դարս մեղան մարդիկ, եւ հաղորդ գտայ նոցա: Առ Նոյիւ գէճ պղծութեանն եւ պոռնկութեանն, առ Աբրահամաւ անբնական չարութեամբն, որով կիզան երկնային հրովն՝ յաւրինակ մեղաւորիս, առ Մովսէսիւ անհնազանդութեամբ, որով երկիր կլանէր, եւ հուրն ծախէր, առ Եղիայիւ, որով երկինք ցամաքէր, առ Երեմիայիւ անդարձ չարեացն, որով գերեցան միահաղոյն, առ Մակաբայեցոյքն արհամարհեալ զաւրէնս Տեառն եւ զպատուիրանս Աստուծոյ, վասն որոյ մեղայ Աստուծոյ յամենայն դարս եւ ի ժամանակս⁴⁶⁵:

Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, մեղայ հա՛յր սուրբ, զի զայս, [307բ] զոր ասացի եւ այլ անթիւ եւ անհամար մեղք զոր սատանայի բնութիւն մարդկան սերմանել է զիւր չարութեան սերմն, եւ բոլոր անձամբս գործել եմ, եւ թէ չարին խաբամբ մոռա-

451 Դ > մեղուցեալ եմ... եւ քեզ

452 Դ երեւելիս

453 Դ պաւիտղ] եւ պաւիտղ

454 Դ ամենայն

455 Դ երեւելիս

456 Դ երեւելիս

457 Դ պիղծ

458 Դ երեւելիս

459 Դ երեւելիս

460 Դ երեւելիս

461 Դ զրկող

462 Դ երեւելիս

463 Դ երեւելիս

464 Դ երեւելիս

465 Բ > ոհ, որ յերեւելիս... յամենայն դարս եւ ի ժամանակս

ցայ եւ ծածկեցաւ յինչն եւ ոչ եկն ի միտս իմ խոստովանել առաջի Աստուծոյ, թողու թիւն շնորհեա ինձ, հա՛յր սուրբ, որպէս զԱստուած: Եւ ես գոչեմ որպէս զանառակ որդին. «Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քոյ» (Ղուկ. ԺԵ. 18): Փոշիման եմ յիմ մեղացն, զոր գործեցի ի ծննդենէ Աւագանին մինչեւ ցայսաւր⁴⁶⁶:

Յոյս իմ եւ⁴⁶⁷ ապաւէն զՔրիստոս ունիմ եւ զԻւր ողորմութիւնն⁴⁶⁸, որ ոչ կամի զմահ մեղաւորին⁴⁶⁹, այլ զդարձն, եւ զՍուրբ Աստուածածինն՝ զբարեխաւսն⁴⁷⁰ մեղաւորաց, եւ զՍուրբ Յովհաննէս⁴⁷¹ Մկրտիչն, եւ զՍուրբ Ստեփանոս⁴⁷² Նախավկայն, եւ զՍուրբ Գրիգոր Լուսաւորիչն եւ զամենայն սուրբս եւ զքեզ, հա՛յր սուրբ, որ ես միջնորդ Աստուծոյ

եւ մարդկան եւ խնդրեմ⁴⁷³ զթողութիւն մեղաց իմոց, զոր ինձ⁴⁷⁴ անհնար է ասել մի ըստ միողէ, զի քան զաստեղս երկնից եւ քան զկոյտս աւազոց ծովու բազում են: Զի զհամայնիցն թիւ նա միայն գիտէ, որ զառ ի մէնջ չէութիւն դրոյ իբրեւ զէութիւն գործոց տեսանէ եւ ճանաչէ զմիտս եւ քննէ զխորհուրդս⁴⁷⁵. Նմա փառք յաւիտեանս. ամէն⁴⁷⁶:

Աղաչեմ զքեզ, հա՛յր սուրբ, թողութիւն շնորհեա ինձ մեղաւորիս, եւ աղաւթիւք աւգնական լեր մեղաւորիս, եւ յիշեա առաջի Քրիստոսի:

Զկնի այսորիկ ասէ եւ որ այլ ինչ, զոր առանձնակի պատահի գործեալ է իւր, թէ ի տղայութեանն⁴⁷⁷, թէ յերիտասարդութեանն⁴⁷⁸ եւ թէ ի ծերութեանն⁴⁷⁹, յայտնէ զգործն եւ զչափ մեղացն, եւ թէ զխտութեամբ է, զայն ասէ, եւ թէ անգիտութեամբ, զայն, եւ թէ բռնութեամբ եւ ակամայ զայն յայտնէ, եւ թէ իւր կամաւ՝ զայն ասէ ճշմարտութեամբ, որ խոստովանահայրն զխտեայ, եւ զդեղն

466 Դ. մեղայ Աստուծոյ, հա՛յր, զի զայս ամենայն եւ այլ անթիւ եւ անհամար եւ բոլորով անծամբս գործեցի. Աստուծոյ չեմ երկնէն եւ ի մարդկանէ չեմ ամացեր, իմ խղճմբանքս զիս չէ դարձեր, այլ առակաբար եւ անասանման ընթացիւք զկեանս իմ անցուցեալ եմ եւ կամ յոյժ ամօթով առաջի Աստուծոյ եւ հրեշտակաց աղբակացեալ մեղօք եւ խոցոյրեալ յանցանօք: Զիմ մեղացն զո՛րն ասեմ կամ զո՛րն խոստովանիմ քան զաւագ ծովու շար եւ քան զաստեղս յերկնից բազում է, մեղայ Աստուծոյ: Փոշեման եմ իմ մեղացն. հոբոս ասագին ինձ է պահած, անբուն որդունքն՝ լալ աչացն, եւ կրճել արամանցն ինձ է պահած: Այլ բարոյ դուռն չունիմ] արդ, զորն ասացից... յամենայն դարս եւ ի ժամանակս

467 Դ. > իմ եւ

468 Դ. մարդասիրութիւնն

469 Դ. > որ ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդարձն

470 Բ. բարեխաւս, Դ. բարեխոս

471 Դ. Յովաննէս

472 Դ. զՍտեփանոս] զՍուրբ Ստեփանոս

473 Դ. + զարձակումն եւ

474 Դ. > ինձ

475 Դ. զի Տէր համայնից միայն գիպէ եւ իմանայ զգործս եւ քննէ զմիսս եւ փեսանէ զխորհուրդս, նմա փառք] քան զաստեղս երկնից... քննէ զխորհուրդս

476 Դ. > յափտեանս ամէն

477 Բ. փղայութեան

478 Բ. յերիտասարդութեան

479 Բ. ծերութեան

կարէ դնել, եւ որքան յամէ⁴⁸⁰ եւ յերկարէ ի խոստովանութիւնն⁴⁸¹, բարի է եւ շահ եւ աւգոլտ է նմա, եւ դո՛ւ, ո՛վ սուրբ քահանայ, մտադիւրութեամբ լուր եւ համբերեա, զի վարձս առցես ի Քրիստոսէ:

Պարտ է քահանային հարցանել եւ քննել ստուգութեամբ, զի սատանայ ի ժամ խոստովանութեան բազում ամալթ եւ մոռացումն արկանէ ի վերայ

մեղուցելոյն⁴⁸², եւ յորժամ զամէն բան ճշմարտութեամբ իմա/308ա/նաս եւ ստուգութեամբ, ապա շնորհեա նմա զթողութիւն եւ զարձակումն ի մեղաց իւրոց ողորմութեամբն Քրիստոսի, որ քաւիչն է⁴⁸³ մեղաւորաց եւ յոյս հաւատացելոց իւրոց⁴⁸⁴ Քրիստոս Աստուած մեր, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն⁴⁸⁵:

482 Բ > եւ դու... ի վերայ մեղուցելոյն

483 Բ > է

484 Բ > խրոց

485 Դ Եւ զարձակումն փացէ քահանայն եւ ասացէ. «Տէր մեր Յիսուս Քրիստոս արձակեսցէ զքեզ ամենայն մեղաց քոց, եւ ես նորին ճշմարիտ հրամանաւ եւ իշխանութեամբ կարգիս որպէս փուած է ինձ Աստուծոյ, արձակեմ զքեզ ամենայն մեղաց քոց ի սղալանացոյ: Եւ դարձեալ փամ զքեզ ի ձեռն սուրբ խորհրդոյ եկեղեցոյ, եւ նոյն իշխանութեամբն արձակեմ զքեզ յամենայն մեղաց՝ զմոռացեալոյ եւ խոստովանեալոյ, եւ զոր այժմ չէ ի միտք քո, արձակեալ ես անուամբ Տօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ: Եւ հեղումն արեան Քրիստոսի ի թողութիւն մեղաց քոց եղիցի քեզ, Սուրբ Հոգին Աստուած արձակեսցէ զքեզ յամենայն մեղաց եւ ի սղալանաց քոց եւ արասցէ փաճար Երրորդութեան, եւ Նմա փառք յաւիտեանս. ամէն»] աղաչեմ զքեզ... Նմա փառք յաւիտեանս. ամէն

480 Բ յամենայնի

481 Բ խոստովանութիւն

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ

Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ. յամենայն ժամ օրհնեալ է Աստուած:

Հաւատամ Հայր Աստուած անսկիզբն, Որդին Միածին ի Հօրէ բղխումն, ծագումն աշխարհի, լոյս ամենայնի, որպէս Աթանաս ասէ: Եւ հաւատացեալ յձԺԸ. հայրապետքն ի Նիկիայ ժողովեցան եւ կանոն կատարեցին, զհաւատս քրիստոն[է]ից մեծաւ հաստատեցին ՃԾ. հայրապ[ե]տքն ի Կոստանդինուպօլիս, ԲԾ. հայրապետքն յԵփեսոս:

Նոյնպէս եւ ես հաւատամ ի Հայր եւ Որդին եւ ի Հոգին Սուրբ: Բայց իմ ճարս, իմ հընարս ի՞նչ է, որ Աստուծոյ [140ա] ճանապարհէն մոլորեալ եմ, վասն իմ մարմնոյ խաթերն համար զԱստուծոյ բարէն հեռացեալ եմ. մեղայ Աստուծոյ Գ. հետ:

ԶԱստուծոյ ահեղ դատատանն չեմք յիշել, եւ ոչ ի միտ պահել զահ դժոխոցն, եւ զսառնամանիքն չեմք յիշել, վասն այնորիկ հուր գեհենին ինձ համար կայ պահած:

Այլ ոչինչ բարոյ դուռն չու-

նիմ, յոյս եւ ապաւէն զՔրիստոս ունիմ եւ զԻւր առատ ողորմութիւնն, զԻւր մարդասիրութիւնն, որ վասն մեր յերկնից իջաւ, ի Սրբոյ Կուսէն մարմին էառ, ծնաւ ի Բէթղէէմ. զՆա՛ հաւատամ եւ մեղայ ասեմ: Որ զանառակ որդին ընկալաւ, որ զմաքսաւորն արդարացոյց, որ զպոռնկին մեղքն [140բ] եթող, որ քանանացոյն աղաչանքն ընկալաւ, որ աւազակին զղբախտն եբաց. զՆա՛ հաւատամ եւ մեղայ ասեմ:

Մեղայ Աստուծոյ խորհրդով, բանիւ եւ գործով, մտացութեամբ, շնութեամբ, պոռնկութեամբ, [ա] կամայ եւ յօժարութեամբ, հեշտութեամբ եւ մեղկութեամբ, զանազան եւ ցեղ ի ցեղ պատճառելով, խաղալով, չօշափելով, մտօքս մերձաւորութեամբ, արուական, իգական, անասնական, գրաստական, ի գիշերի եւ ի տուրնջեան. մեղայ Աստուծոյ:

Այլոց մեղքն հրատարակելով, եւ զիմ բազում մեղքս ծածկելով, այլոց շիւղն գերան ասելով, եւ զիմ գերանն շիւղն ասելով, այլոց բա[141ա/բ]ին չար ասելով, եւ զիմ չարն բարի ասելով, այլոց լոյսն խաւար ասելով, եւ զիմ խաւարն լոյս ասելով, այլոց առաքինութիւնն մարդահաճութիւն ասելով, եւ զիմ մարդահաճութիւնն առաքինութիւն ասելով, այլոց շիտակն

ծուռն ասելով, եւ զիմ ծուռն շիտակ ասելով. մեղայ Աստուծոյ:

Պայծառ հանդերձն պատուելով, եւ զաղքատն անարգելով, հարուստն գովելով, խեղկատակելով եւ անզգամութեամբ, անհնազանդութեամբ եւ անամօթութեամբ, բարկութեամբ, նենգութեամբ եւ ոխակալութեամբ եւ առաւել քինահանութեամբ, սպանութեամբ եւ չարութեամբ, հայհոյութեամբ, փառասիրութեամբ եւ չկամութեամբ, հոգեկան եւ մարմնական. մեղայ Աստուծոյ Գ. հետ:

Խորհրդով, աչիչս հայելով եւ ականջացս լսելով, անսուրբ եւ խառնակ /141բ/ կերակուր ուտելով, եւ ընպելի ճաշակելով, եւ ուխտս զնելով եւ ոչ կատարելով, եւ քան զմենայն մեղս վնաս գործելով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, յիրաց նեղասրտութեամբ, բազում նզովս եւ տրտունջս բանբասանք անելով, բանականի եւ անբանականի, շնչաւորի եւ անշնչի, կենդանեաց եւ ննջեցելոց. մեղայ Աստուծոյ Գ. անգամ:

Այս է Ժ. պատգամն Աստուծոյ. ասաց, թէ մի՛ շնար, շնացեալ եմ, ասաց, թէ մի՛ ցանկար, ցանկացեալ եմ, ասաց, թէ մի՛ գողանար, գողացեալ եմ, ասաց, թէ մի՛ սուտ վկայեր, վկայեր եմ, ասաց, թէ մի՛ երդնուլ, երդուեալ եմ: Վա՛յ է

ինձ Ռ. բերան. զո՞րն ասեմ, զո՞րն խոստովանիմ, իմ մեղքն ծանր է եւ անթիւ, /142ա/ զոր սերմանեաց յիս սատանա բարեացն հակառակ, զոր իմ կամս եհան, եւ զորն պ[ա]տրանաց չարին տեղիք եղայ, եւ գործով կատարեցի, եւ անթողնելի մեղք եմ գործել, քանզի մեղայ Աստուծոյ, յամենայն ժամ մեղայ:

Զոր երեւելի եմ քահանայ եւ ի ծածուկ եմ աշխարհական:

Զոր երեւելի եմ մշակ ժիր եւ ի ծածուկ եմ անահ ու ծուլ:

Զոր երեւելի եմ սրբասէր եւ սուրբ եւ ի ծածուկ եմ անյոյս եւ պիղծ:

Զոր երեւելի եմ աղքատասէր եւ ի ծածուկ եմ աղքատատեաց:

Զոր երեւելի եմ մարդոց գովելի եւ ի ծածուկ եմ պարսաւելի:

Զոր երեւելի եմ բարի եւ բարեսէր եւ [ի] ծածուկ եմ չար եւ չարասէր:

Զոր երեւելի եմ հիւրասէր /142բ/ եւ ի ծածուկ եմ հիւրատեաց:

Զոր երեւելի եմ հաշտարար եւ ի ծածուկ եմ խռովարար:

Զոր երեւելի եմ ազգաց բանական եւ ի ծածուկ եմ վատ եւ անբանական:

Զոր երեւելի եմ խրատատու եւ յղորդ եւ ի ծածուկ եմ խաւար եւ սուտ:

Զոր երեւելի եմ առաջնորդ եւ ի ծածուկ եմ մոլորող:

Ձոր երեւելի եմ աղբիւր ծառաւեաց եւ ի ծածուկ եմ առու ցամաք անջրոց:

Ձոր երեւելի եմ ուռ կանանչ, եւ ի ծածուկ եմ վարուց չոր:

Ձոր երեւելի եմ այր առաքինի եւ ի ծածուկ եմ բանսարկուի:

Ձոր երեւելի եմ հրաշէջ եւ ի ծածուկ եմ հրաբորբոք: /143ա/

Ձոր երեւելի եմ ոսկի եւ ի ծածուկ եմ ժանգ: Վա՛յ ինձ Ռ. բերան, աւուրն դատաստանին մեղայ Աստուծոյ:

Քրիստոսը մեր գայ դատաստան, դնի աթոռըն զանազան, հընչէ եւ փողըն Գաբրիէլեան, գան առաքեալքն երկոտասան, հրամայէ Տէրըն վերնական, որ նստէին ի միաբան: Եկեալ ժողովին ազգս ամենայն, որք առ Քրիստոս դաւանեցան, կանգնին արդարքն յաջակողմեան, եւ մեղաւորքն ի ձաղն կան: Կախեն կշիռն արդարութեան, եւ մեղաւորքն սարսեալ դողան, դատող ընին դատաստանին, բարիքն չաւեաց բաժանեցան, եւ մեղաւորքն կափկափեցան, արդարքն ուրախ փառս տան. ամէն, մեղայ Աստուծոյ: /143բ/

Երբոր Աստուած ըզմեզ խնդրէ, պատասխանի բերան չունիմք, զի անեզր եւ անթիւ անթողլի մեղք եմք գործել, թողութեան եւ ողորմութեան ճարակ

չունիմք: Յոյս եւ ապաւէն ըզՔրիստոս ունիմք, որ վասն մեր ի Կուսէն մարմին էառ, ի Բեթլաէմ ընծայեցաւ, թագաւորաց երկրպագեցաւ, քառասնօրեա ի տաճարն եկաւ եւ [ի] ծերոյն Սիմէոնի գըգուեցաւ եւ ընդ մարդկան չըջեցաւ, վասն մեր խոնարհեցաւ եւ աշակերտաց զոտս լուաց, վասն մեր մատնեցաւ ի ձե[ռ]ն հրէից, վասն մեր չարչարեցաւ, վասն մեր խաչեցաւ, վասն մեր երեք ժամու ի դժոխն քակեաց, եւ հոգիքն ի բանդէն ազատեաց, /144ա/ վասն մեր թաղեցաւ, ի մեռելոց յարեաւ, եւ մեզ յարութիւն պարգեւեաց, ի յերկինս համբարձաւ եւ ընդ աջմէ Հօր նըստաւ, գալոց է փառօք՝ դատել զկենդանիս եւ ըզմեռեալս. զՆա՛ հաւատամ եւ մեղայ ասեմ: Մեղայ յԱստուծոյ, մեղայ յԱստուծոյ յամենայն ժամ:

Ձի ոչ ուրացայ զանձն իմ եւ առի զխաչն՝ հետեւելով քեզ, միշտ միաբանելով ընդ մի եւ ընդ երկու, վասն այսորիկ ոչ ընկալայ ի Հօրէ Քոռմմէ ըզխնդրուածս իմ:

Մեղայ, հա՛յր սուրբ, աստուածութեանդ ճշմարիտ, մեղայ միասնական Սուրբ Երրորդութեանն, աստուածութեան ճշմարիտ, մեղայ Քեզ, Որդի՛դ Սուրբ, աստուածութեան ճշմարիտ: Մեղայ Քեզ, Հոգի՛ Սուրբ, /144բ/ աստուածութեան ճշմարիտ: Հայր անս-

կիզքն, սրբեա՛ զմիտս իմ: Որդիդ Միածին, սրբեա՛ զհոգիս իմ: Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ, մաքրեա՛ զմարմին իմ [յ]ամենայն ազտոյ մեղաց: Սուրբ Երրորդութիւն ամփոփեա՛ զգայարանս իմ հոգոյ եւ մարմնոյ: Հանդարտացո՛ զվայրենացեալ բնութիւնս ի մեղաց, մեղայ Աստուծոյ յամենայն ժամ:

Եւ այժմ զղջացեալ եմ բոլորով սրտիւ իմով բարեխօսութեամբ

Սրբոյհոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Կարապետին, եւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ առաջի քո, հա՛յր սուրբ, խնդրեմք ի քէն թողութիւն, զոր տաս ար/145ա/ձակումն ի կապանաց մեղաց մերոց:

Աստ ասի որիչ, որիչ անուանէ զմեղքն, զոր առանձնակի գործեալ է ի հարստահարութենէ մարմնոյ եւ յորոգայթից սատանայ, եւ ապա ասացէ հայր սուրբ զքեզ ունիմ: